

ՄԱՐԶԻԿ

ՀԱՇՄ

Մարզիկ

ՄՃԼԵ ՐԵԱՅԻՆԵ ՏՃԻՐԵ
ԿՎԵՐԻՅԵ ՀՈՄԵՆԵՄԻ ՅԻՐՈՒ

ԻՐ ՏԱՐԻ, 2009, ԹԻԻ 5 (323) VOL. XXVIII N°5

ՍԵՆԵ ԹԱՄԵ ԵՎ ԵՃՏՐՈՆ - ԵԿԵԴ ՀԱՄԱՏ

marzig
SPORTS MAGAZINE



Հ.Մ.Ը.Մ. - ՃՐԱՆՍԻ
25-ՐԴ ԲԱՆԱԿՈՒՄԸ

ՀԱՄԱ-Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ ՄԱՐԶԱԽԱՂԵՐՈՒ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՆՈՆՆԵՐ

Հ.Մ.Ը.Մ.ի Ե. Պատգամաւորական Ժողովին որոշումով, 1992ին պատրաստուեցաւ Հ.Մ.Ը.Մ.ի մարզախաղերու ընդհանուր կանոնագրութիւնը, նպատակ ունենալով:

«1. Դիւրացնել մարզական ձեռնարկ կազմակերպող մարմիններու կամ յանձնախումբերու գործը:

«2. Միօրինականացնել Հ.Մ.Ը.Մ.ի վարչութիւններուն կազմակերպած մրցաշարքերուն ընթացքը:

«3. Միութեան ներքին օրէնքներուն յարգումը ապահովել առաւելագոյն չափով»:

Ինչպէս միջ-մասնաձիւղային մրցաշարքերու պարագային, այս կանոնագրութիւնը ուղեցոյցի դեր կը կատարէ նաեւ համա-Հ.Մ.Ը.Մ.ական մարզախաղերու ժամանակ: Դետեւաբար, համա-Հ.Մ.Ը.Մ.ական 8րդ մարզախաղերուն հետեւող մարզասերները լուսաբանելու համար, ստորեւ կու տանք այդ կանոնագրութենէն կարելոր հատուածներ:

Մրցաշարք մը ղեկավարող յանձնախումբը պարտականութիւն ունի յարգել տալու հետեւեալ օրէնքները, մրցաշարքի մը մասնակցող կազմերուն:

1. Մրցումները ղեկավարելու պարտականութիւնը ունեցող յանձնախումբը կը պատրաստէ մրցաշարքի մը յայտագիրը:

2. Խաղերու յայտագիրը կը պատրաստուի վիճակաձգութեամբ, ի ներկայութեան շրջաններու ներկայացուցիչներու նեժամասնութեան կամ տոյն ներկայացուցիչներու համախոհական կարգադրութեամբ այլ ձեւի մը շուրջ:

3. Համա-Հ.Մ.Ը.Մ.ական մրցաշարքի մը յայտագիրի կազմութեան պահուն Կեդրոնական Վարչութեան ներկայացուցիչին ներկայութիւնը պարտաւորիչ է:

4. Մրցաշարք մը կարելի է կազմակերպել գտումի կամ կէտերու դրութեամբ, ըստ ժամանակի յարմարութեան:

5. Մրցաշարքի մը ընթացքին մրցումները կը ղեկավարուին ըստ միջազգային օրէնքներու:

6. Մրցումներու **թեքնիք** բաժինին վերաբերող միջազգային բոլոր օրէնքները ի գորտու են:

7. Համա-Հ.Մ.Ը.Մ.ական մրցաշարքի մը վայրը եւ թուականը կը ճշդէ Կեդրոնական Վարչութիւնը, եթէ այս պարագան զանց առնուած ըլլայ Պատգամաւորական Ընդհանուր Ժողովէն:

8. Միջ-շրջանային մրցաշարքի մը վայրը եւ թուականը կ'որոշուի մասնակցող շրջաններու ներկայացուցիչներու խորհրդակցութեամբ եւ Կեդրոնական Վարչութեան հաւանութեամբ:

9. Համա-Հ.Մ.Ը.Մ.-ական կամ միջ-շրջանային մրցաշարքերու կրնան մասնակցիլ միայն Հ.Մ.Ը.Մ.ական խումբեր:

10. Մրցաշարքի մը կրնան մասնակցիլ մրցաշարքին թուականէն նուազագոյնը 6 ամիս առաջ միութեան անդամ արձանագրուած Հ.Մ.Ը.Մ.ական մարզիկներ:

11. Մրցաշարքի մը մասնակցող խումբին անուանացանկը, իր անհրաժեշտ մանրամասնութիւններով, պէտք է դրկուի կազմակերպող շրջանի մարմնին, մրցաշարքի թուականէն նուազագոյնը մէկ ամիս առաջ:

12. Անուանացանկը պաշտօնապէս պէտք է վաւերացուած ըլլայ մասնակցող շրջանին գերագոյն մարմնին կողմէ:

13. Անուանացանկին մէջ չգտնուող մարզիկներ չեն կրնար մասնակցիլ մրցումներուն. հակառակ պարագային օրինազանց խումբը պարտուած կը համարուի մէկ մրցումի համար:

14. Անուանացանկի վրայ յաւելում կամ փոփոխութիւն պէտք է առաջարկուի մրցաշարքի սկսման թուականէն 15 օր առաջ:

15. Մրցումի մը չներկայացող խումբը ի բացակայութեան պարտուած կը յայտարարուի: Կրկնութեան պարագային մրցաշարքէն դուրս կը դրուի:

16. Խումբ մը մրցումի ճշդուած ժամէն եթէ 15 վայրկեան աւելի ուշ դաշտ ներկայանայ, կը յայտարարուի պարտուած:

17. Դ. Պատգամաւորական Ընդհանուր Ժողովի որոշումով խումբերը աստիճանաբար գտուած պէտք է ըլլան օտար տարրերէ եւ հայացած՝ ամբողջութեամբ:

18. Ոչ-հայ մարզիկներ չեն կրնար մաս կազմել համա-միութենական կամ միջ-շրջանային մրցաշարքերու:

19. Հակառակը հաստատուելու պարագային խումբ մը կը յայտարարուի պարտուած՝ եթէ նոյնիսկ մրցումէն յաղթական ելլէ:

20. Նոյն յանցանքը կրկնուելու պարագային խումբը կը կախակայուի մրցաշարքէն:

21. Մրցաշարքերը պէտք է ղեկավարուին միջազգային կամ ազգային ֆետերասիոններէ վկայուած իրաւարարներով:


22. Մրցումին վերաբերեալ որեւէ բողոք կամ դիտողութիւն պէտք է յայտնուի իրաւարարին կամ ղեկավարող մարմնին, մրցումը սկսելէ առաջ:

23. Մրցումի ընթացքին ծագած հարցի մը դէմ բողոքը մրցումի աւարտին իսկ պէտք է յայտնուի իրաւարարին կամ ղեկավարող մարմնին: Իսկ գրաւոր բողոքի համար պայմանաժամը 24 ժամ է:



ԹԻՒԻՆ ՆԻՒԹԵՐՆ

MARZIG SPORTS MAGAZIN EDITED MONTHLY BY HOMENETMEN
 مَارزِيك مجله رياضية شهرية تصدرها جمعية الهومنتمن الرياضي



Մարզական ամսաթերթ
 Հրատարակություն՝ Հ.Մ.Ը.Մ.ի
 ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԱՆ

Ի.Ը. ՏԱՐԻ, 2009, ԹԻ 5 (323)

ԽՄԲԱԳԻՐ
 Վիզեն Աւագեան

ԽՄԲԱԳՐՈՒԹԱՆ ԱՆԴԱՍ
 Սեդա Պէշեան, Սեւան Նազարեան

«ՄԱՐԶԻԿ»-Ի ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲ
 Պատրիկ Կիւլպէնկեան
 Աբօ Մոսիկեան
 Գօգօ Սկրտիչեան
 Վահան Համամճեան
 Տիրան Շահինեան
 Սալբի Ճէճէեան
 Վահէ Թանաշեան

ԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ ՈՒՆԻՆ
 Ներսէս Արք. Բախտիկեան*, Սամուէլ
 Սկրտիչեան, Կարպիս Գոյունճեան,
 Գ. Թորոյեան, Սալբի Լատոյեան
 և շրջաններու թղթակիցներ:
 Էջադրում - Զարեհ Զէօրէքճեան
 Գրաշարութիւն - Վերա Բարսեղեան
 Colour Separation - Photogravure Paklayan
 Կողքի Զեւաւորում՝ Տպագրութիւն



ԽՄԲԱԳՐՈՒԹԱՆ ՀԱՍՑԷ
 Պուրճ Համուտ, Եհնիշեանի Թաղ
 «Սեւան» Շէնք, Գ. Յարկ
 Հեռ: 01/248043, Բաք: 01/260117
 E-mail: marzig@homenetmen.org
 P.O. Box: 80486 B. Hammoud, Lebanon

ՏՐՈՒՄ


Լիբանանի մէջ թերթին
 հատավաճառի սակն է 3000 լ.ն.:
 Տարեկան բաժանորդագրութեան սակ
 ծշողած է 35000 լ.ն.:
 Լիբանանէն դուրս թերթին
 բաժանորդագրութիւնը
 կը կատարեն Հ.Մ.Ը.Մ.ի Սեկուսի
 և Շրջանային Վարչութիւնները:
 Թերթը ուղղակի Լիբանանէն
 կը ստացուի անձնական
 բաժանորդագրութեամբ
 (Տարեկան սակ՝ Միջին Արեւելեան
 և Եւրոպական երկիրներ \$50,
 Ամերիկա և Աւստրալիա՝ \$55):



14

Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ ԿԵԱՆՔ

- Խմբագրական 2
- Հ.Մ.Ը.Մ.ականի Խոհեր 3
- Սկաուտական 5
- Պատմութիւն 8
- Մասնաձիւղէ Մասնաձիւղ 22



24

ԲԱԺԻՆՆԵՐ

- Մարզական Հոգեր 11
- Միջազգային 12
- Հ.Մ.Ա.Կ. 14
- Մանկապատանեկան 38
- Տարբեր Հայեացքով 40



30



ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԱՆՍՏՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ԱԿՈՒՄԲԻՆԵՐԸ Կ'ԱՄՄԱՅԱԿԱՆԱԿ

«**Գ**իրքի մը երկու երեսներն ալ պէտք է կարդալ», կ'ըսէ ժողովրդային առածը: Ակմբաշինութիւնը, որուն նուիրեցիք մեր նախորդ խմբագրականներէն մէկը (թիւ 320), այդ գիրքին կարդացուելիք երեսներէն մէկն էր, որ ունէր նաեւ իր երկրորդ երեսը՝ նոր ակումբներու կարիքին դիմաց, օրէ օր ամայացող ակումբներու երեւոյթը:

Արդարեւ, ակումբ մը, ինչպէս որեւէ հաւաքավայր, ունի նիւթեղէն եւ ոգեղէն իր զոյգ գոյութիւնները: Նիւթեղէն գոյութիւնը աւելի երկար կը գոյատեւէ՝ բան ոգեղէնը, նայած թէ ակումբը հիմնողները որքան լաւ զետեղած են անոր հիմերը:

Մեր առօրեային մէջ յաճախ կը նայինք յարատեւող ակումբներու եւ կը կարծենք, թէ անոնք տակաւին գոյութիւն ունին: Մինչդէռ անոնք գոյութիւն ունին իբրեւ խորհրդանիշ եւ նիւթեղէն կառոյց, բայց ոչ՝ իբրեւ կենդանի եւ բաբախուն իրականութիւններ: Իբրեւ այդպիսին, մեռած են անոնք:

Մեռած են, որովհետեւ ոգեղէն այն տուեալը, որ պատճառ դարձած է անոնց շինութեան եւ յարատեւման, տկարացած է, մեռած է:

Տուն մը տո՛ւն է, երբ զայն իբրեւ տուն կ'ընդունին անոր բնակիչները: Տունը կը շինուի խանդավառութեամբ, խնամքով եւ գուրգուրանքով: Երբ ան շինարարն ու զաւակները կը պատսպարէ ցուրտէն ու տաքէն, զիրենք կը պաշտպանէ արտաքին յարձակումներէ, եւ ետեւի պարտէզին մէջ անոնց կը պարգեւէ ծաղիկներու բոյր եւ զովութիւն, մարդ երախտագիտութեամբ կը նայի տան, իր մեծցող զաւակներուն, ծաղիկներուն ու թուփերուն, եւ կ'ըսէ. «Այս շէնքը ե՛ս կառուցեցի, այս ընտանիքը ե՛ս հաստատեցի, այս ընտանիքը եւ այս շէնքը միասնաբար ինձի համար եղան տուն եւ հարազատ մթնոլորտ»:

Բայց երբ զաւակները մեծնան, կամաց-կամաց հեռանան տունէն, եւ երբ ալ պարբերաբար կամ բնաւ չհանդիպին հոն իրարու, երբ շինարարն ալ մահանայ, տունը կ'ամայանայ: Շուտով պատասխանատուներ կը փնտռուին ստեղծուած տխուր կացութեան համար: Կը տրուին զանազան բացատրութիւններ, սակայն ոչ ոք կ'ըսէ. «Տունը լքուեցաւ, որովհետեւ տուն չէր այլեւս»:

Իսկ ինչո՞ւ տուն չէր: Դինի եւ նորի պայքա՞ր, ինչպէս կը սիրեն բացատրել շատեր: Ո՛չ, ճիշդ այդ պայքարելու ոգիին պակասը:

Ազգային-միութենական մեր կեանքին մէջ հետզհետէ աւելի ցայտուն կը դառնան այս երեւոյթին հետեւանքները: Մեր ակումբները կ'ամայանան, որովհետեւ մինչ ուրիշներ կը ստեղծեն իրենց ակումբները շնչաւորող նոր ազգակներ ու արժէքներ, մենք կ'անտեսենք մեզ պահող արժէքները եւ անհասկնալի անտարբերութեան մը զոհը կը դարձնենք անոնց ոգեղէն իրականութիւնը:

Անտարբեր մարդը, արժէքի հասկացողութիւն չունեցող մարդը պայքարելու, յառաջդիմելու ոգի չ'ունենար: Իրեն համար յառաջդիմութեան պատճառը կամ յառաջդիմութեան ծամբով նուիրական արժէքներ ստեղծելու ոգին մեռած է իր մէջ: Իր մէջ մեռած է հետեւաբար բարձրանալու եւ ուրիշներն ալ իր հետ բարձրացնելու ոգին: Մեռած է ան ներքնապէս:

Մինչ մեր ակումբները կը շարունակեն գոյութիւն ունենալ իբրեւ նիւթեղէն իրականութիւններ, անոնց հետզհետէ ամայացումը կու գայ ահագանգը հնչեցնելու, թէ անոնք սկսած են պարպուիլ իրենց ոգեղէն գոյութիւնը գուրգուրանքի, զոհողութեան եւ հոգածութեան առարկայ դարձնող նոր սերունդէն:

Իսկ այս արդէն զօրաշարժ պահանջող մտահոգի՛չ երեւոյթ է:

ԲԱՐՈՅԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆ



Սամուել Սկրտիչեան ԼՈՍ ԱՆՃԵԼԸՍ

Երբեմն կ'ըսեն.

- Օրերը փոխուեալ են, դերերը փոխուեալ են, մարդիկ փոխուեալ են:

Կ'ուզէի չհաւատալ այս ասոյթին: Բայց կարծես կեանքի պայմանները կը հարկադրեն ընդունիլ այս ասոյթին ճշմարտութիւնը. նոյնիսկ եթէ այդ ճշմարտութիւնը հաճելի չէ:

Մեր խօսքը հիմնաւորելով Հ.Մ.Ը.Մ-ին, պիտի ուզէինք կարգ մը մատնանշումներ ընել անոր բարոյական կեանքին հետ առնչութիւն ունեցող հարցերու շուրջ:

Ներկայ օրերուն, երբեմն Հ.Մ.Ը.Մ-ի առօրեայ կեանքէն ներս աւանատես կ'ըլլանք բարոյական դրսեւորումներու, ելոյթներու, որոնք բոլորովին անհաշտ են Հ.Մ.Ը.Մ-ի բարոյական ըմբռնողութեան հետ:

Միութենական հանդիպումներու ընթացքին, անոնք ըլլան մարզական թէ՛ յարաբերական, երբեմն ունկնդիր կ'ըլլանք տղեղ արտայայտութիւններու, անվայել ընդվզումներու, որոնք բացարձակօրէն խորթ են Հ.Մ.Ը.Մ-ի դաստիարակութեան պարկեշտ, ազնիւ ոգիին:

Երբեմն աւանատես կ'ըլլանք երէց եղբօր հանդէպ յարգանքի, պատկառանքի պակասին, անտեսումին, որ երբեք չի բխիր Հ.Մ.Ը.Մ-ական մարդուն եղբայրական համեստ, խոհեմ գիտակցութենէն:

Դեռ, կան երէց եղբայրը խօսքի առարկայ դարձնող, չարախօսող մտայնութիւններ, որոնց համար անցեալի մարդը ժամանակավրէպ, ճախողած կը նկատուի: Այս մտածողու-

թեան տէր մարդոց քով, երէկուան վարչականին, երէկուան վարիչին կամ խմբապետին հանդէպ չկայ քաղաքավարութեան յարգանքի բաժին, ոչ ալ պատկառանք՝ տարիներու անոր վաստակին, նուիրումին նկատմամբ: Տասնեակ տարիներ միութեան համար ժամանակ տրամադրած, կեանք մաշեցուցած մարդիկ՝ Հ.Մ.Ը.Մ-ական եղբայրներ, մէկ օրէն միւսը կը նետուին մոռացութեան գիրկը:

Հարկ չենք տեսներ շարքը երկարել: Բայց այս վարմունքը շինիչ չէ:

Այս տղեղ իրողութեան տպաւորութեան տակ, կը տարուի մտածել, թէ ինչո՞ւ բարքերու, օգտակար սովորութիւններու այս խաթարումը: Ինչո՞ւ բարոյական, պատուական ըմբռնումներու այս այլասերումը, քանդումը, որոնք կրնան մեր միութեան նուիրագործած բարքերը, մեր բարոյական մեծութիւնը տանիլ դէպի հոգեկան սնանկութիւն:

Այսօր, այս օտարամուտ կենցաղավարութեան դիմաց մատնանշում չընել, նկատառութեան չյանձնել կարծեմ ճիշդ չէ: Վաղը կրնանք ափսոսալ:

Ամէն Հ.Մ.Ը.Մ-ական պարզ ու յստակ գիտակցութիւնը պէտք է ունենայ, որ Հ.Մ.Ը.Մ- նիւթական երեւոյթներու ցուցադրութիւն, Ֆութպոլի յաղթանակ, մարզիկի մը գեղեցիկ խոյանք, կամ՝ փառաւոր շէնքի մը հոյակապ կառոյց ըլլալէ առաջ, մարդակերտումի, հայակերտումի վարդապետութիւն մըն է: Ազգային իմացականութեան դպրոց մըն է: Դպրոց մը, ուր կը սորվեցնեն զոհողութեան ոգի, եղբայրական սիրոյ քաղցրութիւն, բարոյական դաստիարակութեան գեղեցկութիւն ու, այս բոլորին պսակը՝ ազգային ոգի:

Մենք այսօր կեանքի պայմաններու բերումով, դաշտերու վրայ կրնանք ֆիզիքական յաղթանակներ չկերտել: Մենք այ-

սօր դաշտերու վրայ, մարգական խաղերու մէջ կրնանք պարտութիւններ կրել: Նաեւ, ճիշդ է, որ այդ պարտութիւնները կրնան մեր վարկէն, մեր հմայքէն բան մը պակսեցնել: Բայց վաղը մենք դարձեալ կրնանք յաղթանակներ, փառքեր կանգնել: Յաղթանակ թէ պարտութիւն փոխադարձ են՝ կրնան երթալ ու գալ: Անոնք առաւելաբար կախեալ են ժամանակի պայմաններէն՝ նայած մեր ֆիզիքական կարողութեան, մեր հոգածութեան, նորը պատրաստելու մեր աշխատանքէն, մեր նուիրումէն: Բայց վայ որ կորսնցնենք մեր բարոյական վարկը, որ կարողականութեան մեր ուժն է: Այն ատեն վտանգը կ'ըլլայ մեծ ու մենք, անոր հետեւանքով կրնանք կորսնցնել մեր ամբողջ ունեցածը, մեր տեսլականը, որուն վերադարձը կրնայ շատ դժուար ըլլալ: Եւ կամ՝ կրնայ երբեք չգալ:

Մաքուր, զօրաւոր բարոյականի տէր միութիւն մը, թէեւ կրնայ ցնցումներու, վնասներու ենթարկուիլ, բայց երբ անոր բարոյական հիմքը ամուր կառոյցներու վրայ դրուած ըլլան, շատ դիւրութեամբ կարելի կ'ըլլայ գայն վերականգնել ու աւելի գեղեցիկը, աւելի զօրաւորը ունենալ: Ուստի, այսօր բարբերու այս հոլովոյթին առջեւ հարկ է, որ մենք գիտակցինք տէր ըլլալ Հ.Մ.Ը.Մ.ական դրոշմ ունեցող մեր առաքիլ-նութիւններուն, մեր նկարագրին, մեր սովորութիւններուն: Այսօր մենք մեր նախնիներէն մեզի ժառանգ ձգուած աւանդութիւնները, նուիրական հասկացողութիւնները իբրեւ հարստութիւն, իբրեւ մասունք ամուր պահելու ենք: Որովհետեւ, այս օտար ափերու վրայ, անոնցմով կը կազմուի յարա-

տեւելու, կեանքի դժուարութիւններուն դիմադրելու մեր ուժը, կենսունակութեան մեր սնունդը:

Այս օրերուն, երբ մարդոց մօտ բարոյական հասկացողութիւնները տակաւ արժէք, իմաստ կը կորսնցնեն, մենք առաւել քան երբեք, աչալուրջ կերպով հսկելու ենք Հ.Մ.Ը.Մ.ի բարոյական դաստիարակութեան, Հ.Մ.Ը.Մ.ի բարոյական կառոյցներուն:

Եթէ կեանքի պայմաններու բերումով, մեր շարքերուն մէջ կան մարդիկ, որոնց համար մոռացութեան տրուած են Հ.Մ.Ը.Մ.ի կազմակերպութեան բարոյական առաքելութիւնը, Հ.Մ.Ը.Մ.ի կառոյցին նուիրական արժէքները՝ անհրաժեշտ է, որ այդպիսիները կա՛մ զգաստութեան հրաւիրուին եւ կամ դուրս մնան:


Եզրակացնելով մեր խօսքը կ'ըսենք-

Կեանքի պայմանները շատ բան փոխած են մարդոց թէ հաւաքականութիւններու ըմբռնումէն, կեանքէն ներս: Հոգեկան շատ մը գեղեցկութիւններ, շատ մը ազնիւ արժանիքներ, բարոյական մեծութիւններ գլխիվար չըջուած են: Համոզուած եմ, որ այս քանդիչ իրողութեան ի տես՝ Հ.Մ.Ը.Մ.ի բարոյական դաստիարակութեան հսկելը անյետաձգելի հրամայական մըն է: Ուստի,


Բոլոր անոնք, որոնք Հ.Մ.Ը.Մ.ի բարոյական արժէքներուն հանդէպ պատասխանատու պարտականութիւն ունին, անոնք ըլլան վարչական, պարզ անդամ թէ առաջնորդ, հարկ է, որ անդրադառնան թէ ի՛նչ է իրենց պարտաւորութիւնը Հ.Մ.Ը.Մ.ի հոգեկան կառոյցներուն հանդէպ:

ARMENIA
for private and group trips
www.saberatours.fr

Saberatours Sevan Voyages



WITH THE COLLABORATION OF THE NEW AIRLINE COMPANY



Photos: © Yann Arthus-Bertand, Pierre van der Ciel. Licence 075 960031 - Studio K&A 2005/2005

- Direct Flights
PARIS
YEREVAN
PARIS
- Select your Journey
- Guided Tours for 8 Days or 12 Days

11, rue des Pyramides
75001 Paris
tel 331 42 96 10 10
fax 331 42 96 18 77
saberatours@selectour.com

48, cours de la Liberté
69003 Lyon
tel 334 78 60 13 66
fax 334 78 60 92 26
sevan@selectour.com

67, La Canebière
13001 Marseille
tel 334 95 09 30 60
fax 334 95 09 30 61
marseille@wasteels.fr

32-38, rue Hamrabadoutian
Yerevan
tel 374 10 52 55 55
fax 374 10 56 40 30
saber@arminco.com



ԼՄԻ ԽՄԲԱՒՈՐՈՒՄ ՄԸ ՈՒՆԵՆԱԿՈՒՄ ՏՈՒԵԱՆՆԵՐԸ

Սկառուտական որեւէ խմբաւորում կը կազմուի լաւագոյնին եւ տիպարին ձգտելով: Սկառուտներ միշտ իրենց կարելին ի գործ կը դնեն՝ տեւաբար բարեխառուելու եւ զարգանալու համար:

Զարգացման այս ընթացքին մէջ կան որոշ ազդակներ, որոնք կապուած են տուեալ ժամանակաշրջանի նորութիւններուն, յառաջդիմութիւններուն, ինչպէս նաեւ՝ արդիականացումի առնչուող կարգ մը երեւոյթներուն:

Սակայն, կան նաեւ ազդակներ, որոնք անփոփոխ են եւ միշտ իրենց մեծ դերը ունին խմբաւորումի մը կազմութեան եւ արդիւնաւէտ գործունէութեան մէջ: Հիմնական այդ ազդակներն են՝ սկառուտականը, մշակութայինը եւ ընկերայինը:

Սկառուտական բնագաւառին մէջ, նախ կարեւոր կը նկատուի խմբաւորումի մը անդամներուն թիւը: Ապա, անհրաժեշտ է ուշադրութիւն ցուցաբերել անդամներուն սկառուտական պատրաստութեան: Սկառուտական լայն եւ համապարփակ գիտելիքներով հարուստ ըլլալը մեծ առաւելութիւն մըն է անհատներուն համար: Այդ գիտելիքները, սակայն, ժամանակի ընթացքին պէտք է աւելնան, զարգանան եւ միշտ քայլ պահեն տուեալ ժամանակաշրջանի նորութիւններուն հետ:

Անհրաժեշտ է նաեւ խմբաւորումի ղեկավարութեան մնայուն եւ հետեւողական ներկայութիւնը, այսինքն՝ տիպար խմբաւորում մը պէտք է ունենայ ամբողջական քառորդ՝ իր աշխատանքներուն հեզասահ ընթացքին համար: Խմբապետը եւ պատասխանատուները պէտք է ձգտին անհատները լաւապէս պատրաստել, որպէսզի անոնք թէ՛ իրենց առօրեայ սկառուտական աշխատանքներուն մէջ եւ թէ՛ ապագային, երբ պատասխանատու դիրքերու վրայ գտնուին, կարենան լաւագոյնս կատարել իրենց վստահուած աշխատանքները: Եթէ խմբաւորումին մէջ պատրաստուած նման տարրեր չըլլան, բնականաբար, ժամանակի ընթացքին հաւաքական գործը կը կաղայ եւ չի յարատեւեր:

Խումբը հասկացողութիւնը, սկառուտական թէ՛ սովորական իմաստով, ծնունդ կ'առնէ մարդոց միջեւ յարաբերութիւններու մշակումով: Մարդիկ քով-քովի գալով եւ իրարու հետ յարաբերութիւն մշակելով կը կազմեն խումբը:

ԽՆՉՊԵՍ ՏԻՊԱՐ ԽՈՒՄԲ ՄԸ ՈՒՆԵՆԱԿ

Խումբը հասկացողութիւնը, սկառուտական թէ՛ սովորական իմաստով, ծնունդ կ'առնէ մարդոց միջեւ յարաբերութիւններու մշակումով: Մարդիկ քով-քովի գալով եւ իրարու հետ յարաբերութիւն մշակելով կը կազմեն խումբը:

Խումբը շատ կարեւոր է մարդկային կեանքին մէջ, որովհետեւ հոն է, որ մարդ առիթը կ'ունենայ ուրիշին հետ յարաբերելու, անոր հետ խօսելու, անոր գաղափարները, տեսակէտները եւ փորձառութիւնները լսելու եւ իր ունեցածը ուրիշին հետ բաժնեկցելու:

Ընկերութեան մէջ յաջող խումբ մը ունենալու գլխաւոր երեք պայմաններն են՝ անդամները, ղեկավարը եւ ծրագիրը:

Ա. ԱՆԴԱՄՆԵՐ

Առանց անդամներու խումբ չի կրնար գոյութիւն ունենալ:

Խումբի մը անդամները պէտք է ունենան գլխաւոր հետեւեալ յատկանիշները.-

- Նախաձեռնութեան ոգի.
- Համերաշխութեան ոգի.
- Ներողամտութեան ոգի.
- Ուրիշին կարծիքը լսելու եւ նոյնիսկ համաձայն չգտնուելու պարագային զայն յարգելու կարողութիւն.
- Իրարու օգնելու եւ նեցուկ կանգնելու պատրաստակամութիւն:

Բ. ՂԵԿԱՎԱՐ

Մեծ է ղեկավարին դերը, որովհետեւ եթէ անդամները խումբը կը կազմեն, ղեկավարը կ'աշխատի անոր ամրապնդման եւ զարգացման համար: Առաւելաբար ան կ'որոշէ խումբին դիմագիծը եւ կ'ուղղէ զայն:

Ղեկավարի մը գլխաւոր յատկութիւններն են.-

- Համարձակ ըլլալ

Իբրեւ ղեկավար, խումբի մը անդամներուն վրայ դրական ազդեցութիւն գործելու եւ աշխատանք մը առանց երկմտանքի կամ տատամսումի կատարելու համար, ղեկավար մը ամէնէն առաջ պէտք է ըլլայ համարձակ:

- Անդամները քաջալերել

Ղեկավարը պէտք է ըլլայ այն անձը, որ անդամները կը մղէ աշխատելու, գործելու: Ան պէտք է քաջալերէ անդամները, որովհետեւ իր քաջալերանքը շատ մեծ կարեւորութիւն ունի իրեն հետեւողներուն համար: Նոյնիսկ

եթէ աշխատանք մը իր ճշդուած ուղեգիծէն շեղի, պէտք է կտրուկ ձեւով կեցնէ զայն: Ղեկավարը պէտք է ուղղութիւն տայ, որպէսզի առանց յուսալքուելու, անդամները ճիշդ ձեւով շարունակեն իրենց աշխատանքը:

- Դրական ձեւով մտածէ եւ այդ մտածողութիւնը փոխանցէ խումբի անդամներուն

Ղեկավարը պէտք է միշտ երեւոյթներուն դրական կողմը զարգացունէ: Պէտք չունի ան երեւոյթի մը ժխտական կողմը շատ մեծցնելու եւ հարցեր ստեղծելու, ընդհակառակն՝ ան պէտք է ջանայ յարմար լուծում մը գտնել անոր: Նոյնիսկ հարցերու կամ դժուարութիւններու պարագային, ղեկավարը պէտք է զանոնք ներկայացնէ դրական ձեւով, որպէսզի կարենայ լուծումներ գտնել: Իր այս դրական մտածելակերպն ու մօտեցումը կը դառնան վարակիչ եւ, ինքնաբերաբար, անդամներն ալ կը սկսին նոյն ձեւով մտածել:

- Նախքան խումբի անդամներէն բան մը խնդրելը, ինք պէտք է գործադրէ զայն, ըլլայ օրէնք կամ նոր աշխատանք

Որեւէ օրէնք կամ աշխատանք, երբ տակաւին թողութի վրայ է, տեսական է եւ չէ գործադրուած, կրնայ դիւրին կամ լաւ թուիլ, սակայն երբ մէկը կը փորձէ զայն կիրարկել, կրնայ դէմ յանդիման գտնուիլ զանազան դժուարութիւններու: Այդ

պատճառով ղեկավարը միշտ նախ ինք պէտք է գործադրէ օրէնքները, անսովոր աշխատանքները եւ ապա անդամներէն պահանջէ, որ կատարեն զանոնք, որովհետեւ երբ ղեկավարը փորձէ եւ տեսնէ դժուարութիւններն ու անպատեհութիւնները, կրնայ դիւրութեամբ փոխել որեւէ ծրագիր: Ասկէ բացի, պէտք է մոռնալ նշանաւոր առածը, որ կ'ըսէ. «Մի՛ պահանջեր ուրիշներէն այն, ինչ որ բնաւ դուն չես ըներ»:

- Անդամներէն աւելի գիտելիքներ ունենայ եւ պատրաստ ըլլայ անոնց հարցումներուն պատասխանելու

Հարցերուն եւ գիտելիքներուն լաւատեղեակ ըլլալը անդամներուն վստահութիւն կը ներշնչէ իրենց ղեկավարներուն հանդէպ, ինչ որ շատ կարեւոր է ղեկավար-անդամներ յարաբերութեան մէջ: Որեւէ պարագայի պէտք է առիթ տալ անդամներուն, որ ըսեն, թէ ղեկավարը չի գիտեր, որովհետեւ ասիկա պատճառ կը դառնայ, որ անոնք կորսնցնեն ղեկավարին հանդէպ իրենց յարգանքն ու վստահութիւնը:

**- Ուղղութիւն տը-
նող ըլլայ**

Երբ անդամները կը գտնուին հարցի մը առջեւ եւ չեն կրնար անկէ դուրս գալ, ղեկավարը պէտք է կատարէ իր դերը եւ ուղղող ըլլայ: Անիկա պէտք է ցուցմունքներ տայ՝ հարցերը լուծելու եւ միշտ անձամբ չլուծէ զանոնք, այլ՝ ճամբու մէջ դնէ եւ ձգէ, որ անդամները իրենք լուծեն իրենց հարցերը: Եթէ հարց մը չլուծուեցաւ, այն ատեն միայն ինք պէտք է միջամտէ:

- Զօրաւոր անհատականութեան տէր ըլլայ

Որպէսզի կարենայ ազդել, ղեկավար մը պէտք է զօրաւոր անհատականութեան տէր անձ մը ըլլայ եւ իր օրինակով յարգանք պարտադրէ շուրջիներուն:

- Ժողովրդավար ըլլայ

Ղեկավար մը պէտք է ժողովրդավար ըլլայ եւ միշտ իր անդամներուն արտօնութիւն տայ իրենց կարծիքը յայտնելու կամ իրենք զիրենք պաշտպանելու: Այլապէս, խումբը կը վերածուի այնպիսի հաւաքականութեան մը, ուր ղեկավարը կը հրամայէ, իսկ մնացեալը կը գործադրեն: Բան մը, որ ճիշդ չէ եւ իտէպլ խումբի մը սկզբունքներուն դէմ է: Ժողովրդավար



ղեկավարը նաեւ կը քաջալերէ եւ վստահութիւն կը ներշնչէ անդամներուն, որովհետեւ անոնք գիտեն, թէ զիրենք մտիկ ընող եւ իրենց կարծիքը առնող մը կայ:

- Լիազօրէ գործակիցները

Ղեկավար մը պէտք է անուղղակի իշխանութիւն ունենայ իր խումբին վրայ, որպէսզի կարենայ բոլոր աշխատանքներուն եւ իրադարձութիւններուն մօտէն հսկել: Սակայն, այս իշխանութիւնը պէտք է բռնատիրութեան կամ մենատիրութեան առաջնորդէ գայն, այլ՝ պատասխանատուութիւններ բաժնելով ան պէտք է հսկէ խումբին:



- Պէտք է կարենայ ղեկավարները պատրաստել

Ղեկավար մը յաւիտեանս նոյն գիրքին վրայ չի մնար, հետեւաբար, ան պէտք է զինք փոխարինող եւ իր գործը շարունակող անձեր պատրաստէ:

- Պէտք է ունենայ յստակ հեռանկար, որուն համար պէտք է աշխատի

Ղեկավարը պէտք է լաւ գիտնայ, թէ ինչ կ'ուզէ, ո՞ր կ'երթայ: Ան ուսումնասիրած պէտք է ըլլայ բոլոր կարելիութիւնները, որպէսզի կարենայ

իր կարգին խումբը ուղղել եւ յստակ ուղղութեամբ յառաջանալ, որովհետեւ ետ դարձը դժուար է եւ ղեկավարին հեղինակութենէն շատ բան կը կորսնցնէ:

- Համոզուած ըլլայ իր ըրածով եւ կարենայ անդամները համոզել, թէ ինչո՞ւ տուեալ աշխատանք մը կարեւոր է

Ոեւէ անձ, երբ բան մը պիտի ընէ, կ'ուզէ գիտնալ իր ըրածին լաւ եւ գէշ կողմերը, կ'ուզէ գիտնալ թէ ինք ինչո՞ւ այդ աշխատանքը պիտի ընէ, անիկա ինչո՞վ կ'օգնէ իրեն եւ իր շրջապատին եւ ի՞նչ կ'ըլլայ, եթէ ինք չընէ իրեն տրուած պարտականութիւնը: Այս բոլորը ղեկավարը լաւապէս պէտք է բացատրէ իր խումբին անդամներուն:

- Շատ լաւ պէտք է ճանչնայ խումբին անդամները եւ գիտնայ ինչպէս վարուիլ անոնցմէ իւրաքանչիւրին հետ

Անդամներուն ճանաչումը կարեւոր է ղեկավարին համար, որովհետեւ իւրաքանչիւր անդամ կը զգայ, թէ ինք խումբի համահաւասար անդամ է: Անկէ բացի, ղեկավարը պէտք է գիտնայ անդամներէն իւրաքանչիւրին կարողութիւնը, որպէսզի ըստ այնմ գործ տայ անոնց:

- Գիտնայ աշխատանքը ճիշդ ձեւով բաժնել

Ժողովրդավար ըլլալու կողքին, ղեկավարը նաեւ պէտք է արդար ըլլայ անդամներուն հետ: Ան պէտք է աշխատանք տայ բոլորին եւ ճիշդ ձեւով բաժնէ գայն: Անշուշտ, պիտի ըլլան պարագաներ, երբ անձ մը, որ աւելի աշխատելու կարողութիւն ունի՝ աւելի ծանր աշխատանք պիտի ընէ, սակայն պէտք չէ այդ մէկը զգալի եւ բացայայտ ըլլայ, որպէսզի թէ՛ աշխատողը չզգուի եւ ինքզինք ուրիշէն աւելի կարեւոր չզգայ եւ թէ, որպէսզի քիչ աշխատողը կամ աւելի թեթեւ գործ ընողը բարդոյթներ չունենայ:

- Աշխատանքը հետապնդէ

Ղեկավարը պէտք է անուղղակի ձեւով աշխատանքը հետապնդէ, անդամները քաջալերելով եւ գործի մղելով:

*
* *

Կան երկու տեսակ ղեկավարներ.-

1. Անոնք, որոնց համար կարեւոր է միայն գործի մը իրականացումը:

2. Անոնք, որոնց համար կարեւոր է աշխատանքի մը իրականացումը եւ խումբի անդամներուն գոհացում տալը:

Յիշեալներէն իւրաքանչիւրը, ըստ պայմաններու, ունի իր առաւելութիւնն ու թերութիւնը: Լաւագոյն ղեկավարը կ'ըլլայ ան, որ գիտէ այս երկուքը համադրել եւ գիտէ, թէ ե՞րբ պէտք է առաջին ձեւի ղեկավար ըլլայ եւ ե՞րբ՝ երկրորդ, ըստ պարագաներու եւ պայմաններու:

Գ. ԾՐԱԳԻՐ

Խումբի մը ծրագիրը պէտք է ունենայ հետեւեալ գլխաւոր յատկանիշները.-

- Տրամաբանական ըլլայ եւ կարելի ըլլայ իրագործել: Այս առնչութեամբ պէտք է լաւ ուսումնասիրել եւ նախատեսել հաւանական բոլոր դժուարութիւնները:

- Պէտք է ծրագիրը մշակուի գայն գործադրող անդամներուն հետ, որովհետեւ վերջաւորութեան անոնք պիտի կիրարկեն գայն:


- Պէտք է ծրագիրէն օգտուին խումբին բոլոր անդամները:

- Պէտք է յստակ ձեւով մշակուած ըլլայ եւ հանգրուան առ հանգրուան ճշգրտած ըլլան քայլերը:

- Պէտք է անդամները գիտնան ծրագիրին նպատակը եւ անոր օգուտները:

Լաւ խումբ մը ունենալու համար վերոնշեալ յատկանիշները շատ կարեւոր են, թէեւ որոշ կէտեր կրնան փոփոխութեան ենթարկուիլ Ժամանակի եւ պայմաններու բերումով, սակայն հիմնական սկզբունքները կը մնան նոյնը եւ չեն փոխուիր:

ՀԱՅ ՄԱՐՄՆԱԿՐԹԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԻՒՆԸ ՄԵՐՉԱԲՈՐ ԱՐԵՒԵԼՔԻ ՄԷՋ



մարզական կեանքը, տիրող կլիմային բերումով, վարչութիւնը կը մղէ իր անդամները ծովային լողանքի ու պտոյտներու, գլխաւորաբար Նահր էլ Քէլպ:

Ողիմպիականի պատրաստութիւնը եւ անոր յաջող ելքը բոլորին մտասեւեռումի առանցքը կը կազմէ: Կը նպատակադրուի ո՛չ միայն գոհանալ անդամ մարզիկներով, այլ՝ հնարաւորութիւն տալ բոլոր հայերուն իրենց մասնակցութիւնը բերելու, այս կերպով իրարու քով գալու, հայկական ոգին բարձրացնելու: Ասոր համար 1926 Օգոստոս 28ին հայ մամուլին կը տրուի հետեւեալ յայտարարութիւնը.

«Յ.Ս.Ը.Ս.ի Պէյրուսի մասնաճիւղի տարեկան Բ. ողիմպիականը տեղի կ'ունենայ 3 Յոկտեմբեր 1926ին: Ամէն հայ անհատ որ կը փափաքի մաս կազմել, պարտի դիմել վարչութեան մինչեւ 10 Սեպտեմբեր»:

Առանձին նամակներ կը գրուին Բարեգործականին, Հայ Կաթողիկէ եւ Անթիլիասի որբանոցներու տնօրէններուն՝ յայտնելով ողիմպիականի թուականը եւ կը խնդրեն, «որ եթէ սաներէն մասնակցիլ փափաքողներ կան», անոնց անունները եւ նշանակուած խաղերը յայտնեն վարչութեան: Անթիլիասէն մասնաւորաբար կը խնդրեն նուազախումբը եւ երեսունի մօտ սկաւտներ: Մինչ այդ մարզական կեանքը կը շարունակուի: Պէյրուսի համար նորութիւն եղող հեծելանիւի արշաւի մասին ժողովուրդը կը կարգայ հայ մամուլին մէջ.

«Յառաջիկայ Կիրակի, 26 Սեպտեմբեր 1926, առտուան ժամը 6ին, տեղի կ'ունենայ Յ.Ս.Ը.Ս.ի կազմակերպած հեծելանիւի մրցումը, Նահրի կամուրջէն դէպի Անթիլիաս՝ 10.000 մէթր երթելել: Մրցումին մասնակցողները պարտին ժամը 5.30ին ներկայ գտնուիլ Նահրի կամուրջին վրայ»:

Այս յայտարարութեան մաս կը կազմէ նաեւ հետեւեալը.-

«Միւնոյն օրը, կ. ե. ժամը 3ին տեղի պիտի ունենան ողիմպիական խաղերու նախափորձերը Ռաս Պէյրուսի ֆրանսական դաշտին վրայ: Մասնակցողները պարտին ներկայ ըլլալ որոշեալ ժամուն: Նախափորձերուն ներկայ չեղող մարզիկները կը կորսնցնեն ողիմպիական խաղերու մասնակցելու իրենց իրաւունքը:

«Դաշտին վրայ մարզիկներու ճերմակ տաբատ եւ շապիկ հագնիլը պարտաւորիք է»:

Ողիմպիականի պատրաստութեան ընթացքին, վարչութիւնը թերթին մէջ ըրած յայտարարութիւններով չբաւականանալով, ողիմպիականի նախորեակին յատուկ թուուցիկներով ժողովուրդը կը հրաւիրէ մարզադաշտ:

Նամակներ կը գրուին օրուան դատաւորներուն՝ պրն. Նաթարին, Անթիլիասի որբանոցի նախկին տնօրէն պրն. Մաշնուքի, Տումիթի, Ֆերիսի, Ասատի, Քրոֆորտի, բոլորն ալ Ամերիկեան Համալսարանի ուսուցիչներ: Օրուան թա-

Ներսէս Արք. Բախտիկեան (1911-1989) ԱՆՏԻՊ, ԺԲ. մաս

Մ.Ը.Ս.ի սեմէն ներս, մարզական ու մշակութային կեանքի զարգացման հետ, անոր վարիչներուն ուշադրութենէն երբեք վրիպած չէր միութիւնը օժտելու կեդրոնական մարմինով մը՝ զարկ տալու համար նոր մասնաճիւղերու կազմութեան: Այս նիւթին առնչութեամբ Պէյրուսի իր Օգոստոս 3, 1926 թուակիր նամակով կը գրէ Հալէպին. «Մեզի թելադրուած է նախաձեռնարկ ըլլալ Սուրիոյ Շրջանային ժողովի գումարման՝ գոյութիւն ունեցող մասնաճիւղերու մասնակցութեամբ: Ներքին կազմակերպչական աշխատանքները եւ ողիմպիականի պատրաստութիւնները մեզ եզրակացուցին, որ պէտք է յետաձգել երկու ամիսով, այսինքն ձեր եւ ողիմպիականներէն վերջը»:

Ամրան եղանակին, երբ համեմատաբար կանգ կ'առնէ

գուհիի համար հրաւեր կ'ուղղուի տիկ. Տամատեանին, բայց իր պատճառաբանուած բացակայութեան, տիկ. Նաթանը կը հրաւիրուի օրուան թագուհի: Իր հետ պատուոյ օրիորդներն են Սիրարփի Քեայայեան եւ Շաքէ Գարագաշեան: Դաշտի բըժիշկն է տոքթ. Ա. Պէզճեան:

Ողիմպիականը կը սկսի մարզիկներու տողանցքով, հետաքրքիր հասարակութեան մը ներկայութեան: Նախորդ տարուընէ աւելի հոծ թիւով հանդիսատեսներու կողմէ ողջունուած Պէյրուսի մասնաճիւղի երկրորդ ողիմպիականը իր յայտագիրը կը ճոխանցնէ նոր խաղերով ու մասնակցողներու առաւել թիւերով:

Անունը գոհողութեան արդիւնք, Պէյրուսի մասնաճիւղի երկրորդ ողիմպիականը եկաւ դրոշմել այն հաւատքը, որ սկսուած գործը անվարան շարունակելու վճռականութեամբ հրապարակ իջած երիտասարդութիւնը Հ.Մ.Ը.Մ-ի բարձրացուցած դրօշը պիտի տանի մինչեւ իր պատուոյ բարձունքը:

1926ի ողիմպիականին ախոյեան կը հանդիսանայ Յովհաննէս Շահինեան:

Ողիմպիականէն անմիջապէս ետք, Հալէպէն ուզուած ողիմպիական գործիքներուն համար կը պատասխանուի Հոկտեմբեր 26ին: «Կիրակի օր տեղի ունեցաւ մասնաճիւղի տարեկան Բ. ողիմպիականը: Անցաւ յաջող, մրցանիչները նշանակուած են ներփակ յայտագրին մէջ:

«Այսօր Զեզ ուղարկեցինք երկու սկաւառակ. նիզակ



Զախէն աջ՝ եղբայրներ Լեւոն Պապուզեան, Կարապետ Աղճայեան, Վահան Տօնապետեան, Յովհաննէս Շահինեան եւ Լուտեր Մասպանաճեան:

չկրցանք զրկել, մերինները կոտորած են»:

Միութեան ֆուլթպոլի խումբերուն մէջ կարգ ու կանոն պահելու եւ գանոնք ուժեղացումի մղելու համար, ֆուլթպոլի խումբերուն կը պատրաստուի յատուկ յայտագիր, որուն մէջ ըսուած է.-

- 1.Միութեան պատկանող ֆուլթպոլիստները կէտ առ կէտ հետեւելու են իրենց խմբապետներուն հրահանգներուն:
- 2.Որեւէ դիտողութիւն անհատապէս կամ հաւաքաբար կարելի է ներկայացնել գրաւոր, միութեանս դաշտային խաղերու խմբապետին:
- 3.Ֆուլթպոլիստները պարտաւոր են իրենց խմբապետներուն կանխաւ խմբանել իրենց պատճառաբանեալ բացակայութիւնը:



4.Փորձերուն թող մրցումներուն խաղացողները պարտին որոշեալ ժամուն ներկայ գտնուիլ:

5.Միութեանս անդամ ֆուլթպոլիստներուն բացարձակապէս արգիլուած է աջակցիլ միութեանէս դուրս որեւէ խումբի խաղերուն:

6.Այն անդամները, որ այս կանոնագիրը չեն յարգեր, առաջին ազդարարութենէ մը վերջ, կը կորսնցընեն միութեան խումբերուն մաս կազմելու իրաւունքը:

Քոնսթանցայէն 12 Հոկտեմբեր 1926 թուակիր նամակով կ'առաջարկեն կապ պահել ու տեղեակ պահել Հ.Մ.Ը.Մ-ի աշխատանքներուն շուրջ: Պէյրուսի վարչութիւնը առաջարկը նպատակայարմար գտնելով կը պատրաստուի նոր անդամներ ընտրելու:

տասիանէ. «Մասնաճիւղը կազմուած է 1924ի վերջերը: Այժմ ունինք 110 գործօն եւ 20 համակիր անդամներ: Կազմակերպած ենք երկու ողիմպիականներ: Ներփակ կը գտնէք վերջին ողիմպիականի յայտագիրը՝ չափանիշներով:

«Սօս եօթը ամիս առաջ մարզական երեկոյթ մը սարքեցինք. անցաւ յաջող: Այս երեկոյթն ու տարեկան ողիմպիականները ժողովուրդին մէջ մեծ հետաքրքրութիւն արթնցուցած են եւ անվերապահ համակրանք միութեանս հանդէպ:

«Անցեալ շրջանին ունեցանք ֆութպոլի երկու կանոնաւոր խումբեր: Տեղոյս լաւագոյն խումբերուն հետ մրցելով ձեռք ձգեցին լաւ արդիւնքներ: Անոնք արժանացան որքան հայութեան՝ նոյնքան օտար շրջանակներու գնահատանքին: Երկու շաբաթ է ֆութպոլի եղանակը սկսեր է: Վեց խումբեր իրենց կանոնաւոր փորձերը կ'ունենան: Անդամներուն թիւը օր ըստ օրէ կ'աւելնայ:

«Վերջերս ձեռնարկած ենք սկաուտական շարքերու կազմութեան, կը յուսանք լաւ արդիւնք պիտի տայ»:

1926 Նոյեմբեր 28ին, Մերձաւոր Արեւելքի Որբերու Ընկերակցութեան ակումբին մէջ տեղի կ'ունենայ մասնաճիւղին տարեկան ընդհանուր անդամական ժողովը: Օրակարգ՝ վարչութեան վեց ամսուան գործունէութեան նիւթաբարոյական հաշուետուութիւն եւ նոր վարչութեան ընտրութիւն: Նոր շրջանի վարչական կ'ընտրուին Ժիրայր Պալեան, Վահան Մջիկեան, Պօղոս Եղիայեան, Եփրեմ Էլլէզեան, Արամ Քեայայեան, Օշին Քէչիշեան, Ալպէր Յակոբեան, Յակոբ Գա-

սապեան եւ Յակոբ Հայրապետեան:

Այս ժողովին եւ այլ խնդիրներու մասին Դեկտեմբեր 4, 1926 թուակիր նամակով կը գրուի Հալէպի մասնաճիւղին.

«Անցեալ Կիրակի ընդհանուր անդամական ժողով գումարուեցաւ... Ընտրուեցաւ ինը հոգիէ բաղկացած նոր վարչութիւն մը: Կը յուսանք որ նոր վարչութիւնը իր կարելի սահմանին մէջ օգտակար պիտի հանդիսանայ մեր մատաղ սերունդին բարոյական ու ֆիզիքական դաստիարակութեան... Ինչպէս հաղորդած էինք, «Կայծակ» խումբն ալ մեզի միացաւ, լիայոյս ենք որ մեր խումբերը պիտի ըլլան աւելի ուժեղ, որոնցմով կարելի պիտի ըլլայ ձեռք բերել նորանոր յաջողութիւններ մարզական կեանքի մէջ... Գալով Սուրիոյ եւ Լիբանանի շրջաններու կազմութեան խնդրին, կու գանք յայտնելու որ ո՛չ մէկ անհատ գոյութիւն չունի որ չընդունի Շրջ. Վարչութեան մը ստեղծման անհրաժեշտութիւնը: Սակայն, նկատի ունենալով որ այդ աշխատանքը պիտի տանէր Պէյրութը, բան մը որուն համար մասնաճիւղս պիտի զրկուէր մաս մը անհատներու գործակցութենէն, պատճառ պիտի ըլլար անոր տկարանալուն՝ ինչ որ տակաւին մեծ ջանքերու կը կարօտի, վարչութիւնս իր յաջողական նիւտերուն ուսումնասիրելէ ետք այս հարցը, յանգեցաւ այն եզրակացութեան, որ պէտք է այս խնդրին լուծումը վեց ամիսով յետաձգել»:

(Շար. 12)

Full of Charme Hotel, New Construction, French Architecture, International Standards, 100 m from the Republic Square and 15 minutes from the Yerevan International Airport.

- 44 Rooms and 3 Suites with all comforts,** all climate controled, minibar, shower or bathroom with private WC, hairdryer. Satellite TV, international direct dial phone. Internet & Email access.
- Individualized and personal service,** 24 hour reception and room service
- Bar**

Europe Hotel

Feel at home, away from home...

Reservations **Yerevan**
32-38, Hanrabedoutian Street,
Yerevan 375010, Armenia
Tel 374 10 54 60 60 • Fax 374 10 54 60 50
sales@europehotel.am

www.europehotel.am

Կարպիս Գույումձեան
ԱՌԷՆՔ

ՄԱՐԶԱՆՔՆ ՈՒ ՄԱՐԶԱԽԱՂԵՐԸ

Անտարակուսելի իրողութիւն է, որ երիտասարդութիւնը այսօր մարզանքով ու մարզախաղերով չի հետաքրքրուիր անցեալին նման:

Թէեւ ֆուտպոլի եւ պասքեթպոլի խաղերուն դաշտերը կ'ողողուին մարզասէրներով, սակայն ասիկա մարմնամարզի, նոյնիսկ ֆուտպոլի նկատմամբ անոնց սէրը չ'արտայայտեր, որովհետեւ ինչպէս յաճախ ականատես կ'ըլլանք, մարզասէրներու մեծամասնութիւնը մարզադաշտ կ'երթայ պարզապէս խրախուսելու համար իր պաշտած խումբին խաղացողները, ակելին՝ իր հակամարզական անտեղի ու անվայել արտայայտութիւններով վհատեցնելու եւ բարոյալքելու համար մրցակից խումբին խաղացողները, չըսելու համար բոլորովին կործանարար այն ընթացքին մասին, որուն կը դիմեն անոնք յաճախ խաղերու ընթացքին իրենց ունեցած դժգոհութեան պահերուն:

Եթէ քննարկենք երեւոյթը, էականօրէն շատ քիչեր են անոնք, որոնք մարզական ազնիւ ոգիով ներկայ կ'ըլլան խաղերու:

Տուեալներու համաձայն, այսօր մեծ քաղաքներու աղջրկանց 90 առ հարիւր մարզական ո՛չ մէկ ձեռնարկի կը մասնակցի, իսկ գիւղական շրջաններու մէջ այդ տոկոսը կը հասնի մօտ հարիւր առ հարիւրի:

Պատճառները, անկասկած, որ ժամանակի պակասն ու մանաւանդ մարմնամարզի նկատմամբ տիրող անտարբերութիւնն են: Իրողութիւն մըն ալ այն է, թէ ծնողներ իրենց զաւակները մարզանքներու եւ մարզախաղերու մասնակցելու եւ անոնց ընձեռած բարիքները վայելելու չեն խրախուսեր:

Աղջիկները, բացի դասական կարգ մը մարզախաղերէ, մարզական բոլոր խաղերէ ներս, մանչերէ ետ կը մնան:

Ընկերային պայմանները չեն նպաստեր անոնց որ մարզական բոլոր խաղերու մասնակցին: Հարցը սակայն տարբեր ու նաեւ կենսաբանական ալ է, որովհետեւ կիներու սիրտը այրերէն 10-20 առ հարիւր համեմատութեամբ ակելի փոքր, կազմը ակելի դիւրաբեկ ու թոքերը ակելի տկար են, որով բնական է որ ակելի նուազ կարողութիւններ ունենան անոնք:

Աղջկանց յարմարող մարզախաղերուն լողը, կշռութաւոր մարմնամարզը, դահուկարշաւն ու չմշկումն են: Այս խաղերը հոգեկան անդորրութիւն կու տան եւ կը նպաստեն որ կիրարկողները իրենց ճկնութիւնը եւ ներդաշնակութիւնը պահեն:



Թիավարութիւնը կը զօրացնէ մարմինը եւ կուրծքի գեղձերը գործունէութեան կը մղէ:

Թենիսի, վոլիպոլի եւ պասքեթպոլի խաղերը մարմնին կու տան ճկունութիւն մը, կը մշակեն ընդհանրական ոգին, կ'օգնեն աղջիկներուն, որ դուրս գան իրենց վհատութենէն եւ իրենց պատասխանատուներուն եւ խաղընկերներուն հետ համարձակութեամբ խօսին հոգեբանական հարցերու մասին, որովհետեւ հոգեբանական անդորրութիւնը մարմնին անդորրութեան եւս կը նպաստէ:

Դպրոցական դասացուցակները կը պարփակեն մարզանքի շաբաթական պահեր: Դրժբախտաբար, շատ մը ծնողներ ու մանաւանդ իրենց զաւակներուն նկատմամբ առաւել սէր ու գուրգուրանք արտայայտող մայրեր, մարմնամարզերէ խուսափիլ ուզող իրենց զաւակներուն մեղսակիցը դառնալով, զանազան պատճառներով արգելք կ'ըլլան անոնց մարզախաղերու ջանքերուն մասնակցութեան: Երբեմն կը հասնին այն աստիճանին, ուր բժշկական կեղծ հաստատագիր ներկայացնելով՝ դպրոցներէ ներս իրենց տղաքը մարմնամարզի պահերէն հեռու պահեն:

Ասիկա աններելի սխալ է: Իրենց այս ընթացքով, ծնողներ իրենց զաւակները կը զրկեն մարմնամարզի ունեցած առողջապահական զանազան բարիքներէն:

Անկասկած, որ կարգ մը տղոց մարմնական կազմին նկատմամբ կրնան հակազդեցութիւններ ըլլալ, որոնք բացառութիւն են ու ներելի կրնան ըլլալ: Նաեւ, աղջիկներու նկատմամբ ալ կան նկատողութեան պատահարներ, որ մանչերուն չեն պատահիր: Իսկապէս շատ են այն մանչերը, որոնք դպրոցէն դուրս եւս կը ջանան անհատական կամ խմբային մարզախաղերու մասնակցիլ:

Թէեւ քաջալերելի են իրենց այս ջանքերը, սակայն հարկ է ուշադիր ըլլալ, որովհետեւ մարզանքն ու մարզախաղերը պէտք չէ նաեւ յոգնեցնեն զանոնք այն աստիճան, որ իրենց դպրոցական դասերուն պատրաստութեան արգելք ըլլան: Նման պարագաներու, ծնողները ինքնիշխան կերպով տղոց պէտք չէ հակազդեն, այլ՝ դպրոցի տեսուչին ու մարզանքի ուսուցիչին կարծիքը շօշափեն ու միաժամանակ տղոց տրամադրութիւնը եւ ունեցած նախասիրութիւնները յարգեն:



ՀԱՐԱԼԱՅԻՆ ԱՓՐԻԿԵԻ ՄՈՆՏԻԱԷՆ ՏԱՐԻ ՄԸ ԱՌԱՋ



Գ. Թորոյեան ՊԵՅՐՈՒԹ

Յ առաջիկայ տարի Հարալային Ափրիկէի մէջ տեղի պիտի ունենայ 19րդ Մոնտիալը: Առաջին անգամ ըլլալով նշեալ մրցաշարքը տեղի պիտի ունենայ ափրիկեան երկրի մը մէջ: Զտուամի մրցումները գրեթէ հասած են իրենց վերջնական փուլին եւ կարգ մը երկիրներ արդէն ապահոված են մասնակցութեան իրենց տոմար:

Սակայն, նախքան ափրիկեան Մոնտիալը, պէտք է վերջիւ չել անցեալը: Մոնտիալը ունի իր հարուստ պատմութիւնը: 80 տարի շարունակ բազմաթիւ երկիրներ պայքարած են աշխարհի առաջնութեան տիտղոսին տիրանալու համար: Հոչակաւոր մարզիկներու երազը եղած է Մոնտիալի բաժակը: Հարիւրաւոր մրցումներ, յաղթանակներ, կոլեր եւ... քիչ թիւով յաղթականներ:

18 Մոնտիալներուն մասնակցած են 74 երկիրներ: 31ը Եւրոպայէն, 9ը Հարալային Ամերիկայէն, 9ը Կեդրոնական եւ Հիւսիսային Ամերիկայէն, 9ը Ասիայէն, 14ը Ափրիկէէն եւ 2ը Ովկիանիայէն: Ուշագրաւ է, որ Հարալային Ամերիկայէն միայն Վենեզուելլան է որ իր մասնակցութիւնը բերած չէ: Կատարուած են 730 մրցումներ, նշանակուած՝ 2063 կոլեր: 30.879.410 հոգի ներկայ եղած են այդ խաղերուն (միջին հաշուով 43.614 հանդիսատես) եւ 7 խումբեր հանդիսացած են ախոյեան:

Ամէնէն շատ ներկայութիւնը եղած է 1994ին, Մ. Նահանգ-

ներու Մոնտիալին՝ 3.587.088 հանդիսատես (միջին՝ 68.982), իսկ նուազագոյնը՝ 1934ին, ընդհանուրը՝ 363.000 հանդիսատես (միջին՝ 21.352 հանդիսատես):

ՄՐՅՈՒՄՆԵՐ, ՄԱՐԶԻԿՆԵՐ ԵՒ ԽՈՒՄԲԵՐ

Մոնտիալի պատմութեան առաջին կողը նշանակած է Փրանսացի Լիւսիէն Լորան, 1930ին, Մեքսիքայի դէմ մրցումին 19րդ վայրկեանին: Զուգադիպութեամբ մը, Մոնտիալի առաջին կողըն կողը եւս նշանակած է Փրանսացի մը՝ Լորան Պլան, 1998ին, Փարակուէյի դէմ, 113րդ վայրկեանին: Առաւելագոյն կող նշանակող մարզիկն է պրագիցի Ռոնալտօ, 15 կոլ: Իսկ մէկ Մոնտիալի ընթացքին առաւելագոյն կոլերը նշանակած է այլ Փրանսացի մը՝ Ժիւսթ Ֆոնթէն, 1958ին, 13 կոլ: Մէկ մրցումի ընթացքին առաւելագոյն կոլ նշանակող մարզիկն է ռուս Իկոր Սալենքօ, 1994ին: Քամերունի դէմ մրցումին ան նշանակած է 5 կոլ:

Մոնտիալի ամէնէն կանուխ կողը նշանակած է թուրք Հաքան Շիւքըր, Թուրքիա-Հարալային Քորէա 3-2 մրցումին 11րդ երկվայրկեանին:

Զիլիցի Գարլոս Քագելի առաջին մարզիկն է, որ կարմիր քարտով հեռացուած է Մոնտիալի մրցումէ, 1974ին, Գերմանիա-Չիլի 1-0 մրցումին ընթացքին:

Մեքսիքացի Անթոնիօ Քարպայալ եւ գերմանացի Լոթար Մատթէոս մասնակցած են 5 Մոնտիալներու: Իսկ նոյնինքն Մատթէոս կատարած է առաւելագոյն թիւով մրցումներ, 25 մրցում:

Առաջին մարզիկը որ յաջողած է իրագործել **Հէթրիք**, ամերիկացի Պերթ Փաթենտոն է, 1930ին, Փարակուէյի դէմ:

Չակալօ եւ Պեքընպաուրը յաջողած են թէ՛ իբրեւ մարզիկ եւ թէ՛ իբրեւ մարզիչ տիրանալ աշխարհի ախոյեանութեան տիտղոսին:

Սերպ մարզիչ Պորա Միլոթնովիչ միակ մարզիչն է, որ 5 տարբեր ազգային խումբերու հետ մասնակցած է յաջողական 5 Մոնտիալներու (1986-2002):

Պրագիլցի Փելէ միակ մարզիկն է, որ երեք անգամ տիրացած է աշխարհի ախոյեանութեան տիտղոսին, յաջողաբար 1958ին, 1962ին եւ 1970ին:

Մոնտիալի 18 մրցաշարքերուն միակ կազմը Պրագիլն է, որ ներկայ գտնուած է բոլորին: Սակայն, Գերմանիա կատարած է նոյնքան մրցում՝ որքան Պրագիլը (92 մրցում), հակառակ որ ներկայ գտնուած է 16 մրցաշարքի:

Ամէնէն շատ կող նշանակած է Պրագիլ՝ 201 կող, (միջին 2.14), իսկ համեմատութեամբ ամէնէն շատ կող նշանակողը Հունգարիոյ կազմն է, 87 կող 32 մրցումի ընթացքին (միջին 2.71): Հունգարիոյ կող պատկանի նաեւ այլ մրցանիչ մը. մէկ մրցաշարքի ընթացքին ամէնէն շատ կող նշանակող խումբն է ան՝ 27 կողով (1954ին): Իսկ մասնակից կազմերէն հինգը՝ Չինաստան, Յունաստան, Չայիը, Գանատա եւ Թրինիտատ Թոպաքօ ոչ մէկ կող նշանակած են:

Առաւելագոյն յաղթանակները կը պատկանին Պրագիլի (64 յաղթանակ): Ամէնէն շատ պարտութիւն արձանագրած կազմը Մեքսիքան է (22 պարտութիւն 45 մրցումի ընթացքին): Իսկ 20 երկիրներ յաղթանակ չեն արձանագրած Մոնտիալի իրենց մասնակցութեան ընթացքին:

Ամէնէն կոլառատ մրցումը եղած է 1954ին, Աւստրիա-Չուիցերիա 7-5 արդիւնքով մրցումը: Իսկ ամէնէն մեծ տարբերութեամբ յաղթանակները արձանագրուած են Հունգարիա-Հիւսիսային Գորէա 9-0, Եոկոսլաւիա-Չայիը 9-0 եւ Հունգարիա - Սալվատոր 10-1 մրցումներուն:

Ամէնէն կոշտ մրցումը կը նկատուի 2006ի Փորթուգալ-Հոլանտա 1-0 մրցումը: Այս խաղին իրաւարարը ցոյց տուած է չորս կարմիր քարտ եւ... 16 դեղին քարտ: Այս մրցումը Մոնտիալի պատմութեան մէջ արձանագրուած է «Նիւրէմպերկի ճակատամարտը» անունով:

Այլ կոշտ մրցում մը, որ կը մնայ պատմութեան մէջ, 1964ին, Չիլի-Իտալիա մրցումն է, երբ խաղի աւարտին իտալացի մարզիկները դաշտէն հեռացած են ոստիկաններու ընկերակցութեամբ:

Երեք մրցումներ կը մնան պատմութեան մէջ իրենց հետաքրքրականութեան շնորհիւ:

Ա. 1954ին, Հունգարիա-Պրագիլ 4-2 մրցումը, որ իր մակարդակով եւ հետաքրքրութեան համար ճանչցուած է իբրեւ «Պեռնի ճակատամարտը»:

Բ. 1982ին, Գերմանիա-Ֆրանսա 3-3 (փենալթիներով Գերմանիա յաղթական 4-3 արդիւնքով), կը նկատուի Մոնտիալի պատմութեան ամէնէն հետաքրքրական խաղերէն մէկը:

Գ. 1970ին, Իտալիա-Գերմանիա 4-3 մրցումը, որ հռչակուած է իբրեւ 20րդ դարու լաւագոյն մրցումը:

Մարտը կը հանդիսանայ փորձիկեան առաջին երկիրը, որ

յաջողած է անցնիլ երկրորդ հանգրուան (1986): Իսկ Մէուտաական Արաբիա ասիական առաջին երկիրն է, որ անցած է երկրորդ հանգրուան (1994): Իսկ Սկովտիա հակառակ 7 անգամ մասնակցած ըլլալու իրողութեան՝ ոչ մէկ անգամ կարողացած է անցնիլ երկրորդ հանգրուան:

1954ին կատարուած է Մոնտիալի խաղերուն առաջին պատկերասփռումը:

2006ի Մոնտիալը կը նկատուի ամէնէն կոշտ Մոնտիալը: 345 դեղին քարտ եւ 16 կարմիր քարտեր ցոյց տրուած են 64 մրցումներու ընթացքին:

ՄԱՐՏԱԿԱՆ ՄՐՅՈՒՄՆԵՐ

Մոնտիալի աւարտականին հասած են ցարդ 11 խումբեր, որոնցմէ 7ը հանդիսացած է ախոյեան. Պրագիլ 5 անգամ, Իտալիա՝ 4, Գերմանիա՝ 3, Ուրուկուէյ եւ Արժանթին՝ 2, Անգլիա եւ Ֆրանսա մէկական անգամ: Չորս խումբեր դարձած են փոխ ախոյեան՝ Հունգարիա 2 անգամ, Չեխոսլաւիա՝ 2, Հոլանտա՝ 2 եւ Շուէտ 1 անգամ:

Առաջին մրցումը տեղի ունեցած է 30 Յուլիս 1930ին: Ախոյեան դարձած է Ուրուկուէյ:

Առաւելագոյն աւարտականները խաղացած եւ պարտուած է Գերմանիա՝ 4 անգամ՝ 1966ին, 1982ին, 1986ին եւ 2002ին:

1950ի աւարտական մրցումին ներկայ գտնուած է 199.854 հանդիսատես (մրցանիչ): Իսկ նուազագոյն թիւով ներկայութիւնը արձանագրուած է 1958ի աւարտականին՝ 50.000 հանդիսատես:

Աւարտականի ամէնէն կոլառատ մրցումը եղած է 1958ին, Շուէտ-Պրագիլ 5-2 մրցումը:

1994ին Պրագիլ-Իտալիա մրցումը միակն է, որ աւարտած է 0-0 արդիւնքով եւ դիմուած է փենալթիներու:

Պրագիլ առաջին երկիրն է, որ աւարտական մրցումը իր դաշտին վրայ ըլլալով հանդերձ պարտուած է (1950):

Աւարտականի ամէնէն կանուխ կողը նշանակուած է 1974ին, հոլանտացի Եոհան Նիւքընզի փենալթիով, մրցումին առաջին վայրկեանին, երբ տակաւին գերմանացի ուէէ խաղացող գնդակին չէր դպած:

Անգլիացի ձէօֆ Հըրսթ միակ մարզիկն է որ յաջողած է իրագործել **Հէթրիք** մը 1966ի Մոնտիալի աւարտականին:

Մոնտիալի եւ առհասարակ Ֆուլթպոլի պատմութեան մէջ անմոռանալի եւ հանելուկային կը մնայ 1954ի Գերմանիա-Հունգարիա աւարտականը: Այս մրցումը Ֆուլթպոլի պատմութեան մէջ կը յիշուի իբրեւ «Պեռնի հրաշք», երբ բոլոր անխորը կը սպասէին Հունգարիոյ հանգիստ յաղթանակը, երբ տակաւին 15 օր առաջ հունգարացիք առաջին հանգրուանի մրցումներուն 8-3 արդիւնքով ջախջախած էին Գերմանիան: 4 Յուլիս 1954ին գերմանացիք կը ստեղծեն Ֆուլթպոլի պատմութեան մեծագոյն անակնկալը եւ 3-2 յաղթանակով կը տիրանան տիտղոսին:

ՀԱՅ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ «ԱՐԱՐԱՏ» ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՆ ՄԻՈՒԹԻՒՆՆԵՐՆ ՈՒ ՄԱՍՆԱԾԻԴԵՐԸ

(2007-2009 ԵՐԿԱՄԵԱԿԻ ԳՈՐԾՈՒՆԷՆՈՒԹԵԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԿՆԱՐԿ)

Իրանի Հայ Մշակութային «Արարատ» Կազմակերպությունը ընդհանուր ծանօթացումը կատարել է ետք (տեսնել «Մարզիկ»-ի նախորդ թիւը, էջ 13-15), այս թիւով կ'անդրադառնանք Կազմակերպության չորս միութիւններուն եւ մասնաճիւղերուն վերջին շրջանի գործունեութեան:



10 հազար հանդիսական ընդունող Հ.Մ.Ա.Կ.ի «Արարատ» մարզալանի ֆութպոլի դաշտը:

Ա. ԵՐԷՅՆԵՐԻ ՄԻՈՒԹԻՒՆ

Երէջների Միութեան վարչութիւնը հաւատարիմ մնալով իր առաքելութեան, իր անդամներով՝ աշխոյժ եւ օրինապահ գործունէութիւն է ծաւալել, համագործակցելով կազմակերպութեան բոլոր միութիւնների ու միաւորների, նաեւ Կենտրոնական Վարչութեան հետ, նիւթական եւ բարոյական իր ներդրումը ունենալով բոլոր աշխատանքներում՝ որտեղ իր կարիքն է զգացուել:

Վարչութեան համագործակցութեամբ եւ միութեան երեք բաժանմունքների (հանրային-հասարակական, արհեստից եւ հանդէս-ձեռնարկ) անդամների միջոցով իրականացել են մի շարք ձեռնարկներ, ինչպէս օրինակ՝ պաշտօնական հիւրերի հիւրընկալում, բազմամարդ ելոյթների կարգապահութիւն, հասութեամբ միջոցառումների կազմակերպում, պարսկական բարեգործական երկու ընկերութիւնների հետ համագործակցութիւն, տարեկան վաճառքների ընթացքում եւ

այլն... որոնք նպաստել են կազմակերպութեան՝ նիւթապէս եւ բարոյապէս:

Երէջների միութեան վարչութիւնը, իրեն ենթակայ բաժանմունքների ծրագրերի համագործակցութեամբ ներկայացրել է երկամեայ ծրագիր եւ առաջնորդուել այդ ծրագրով եւ իրականացրել հետեւեալները.

- Ամսական ընդհանուր հանդիպումներ՝ տարբեր նիւթերով եւ առիթներով:
- Ազգային եւ կրօնական տօների առիթներով միջոցառումներ եւ ընթրիքի երեկոններ:
- Կրպակի շարունակական աշխատանք:
- Դաշտահանդէսներ:
- Ուրախ երեկոններ:
- Ձեռարուեստի մրցութիւն:

- Այցելութիւններ եւ շրջապատյաներ, որոնցից յատկանշական էր դէպի Ղարաբաղ հնգօրեայ ճամբորդութիւնը:

- Նոր Տարուան դիմաւորման հանդէս:
- Նոր տարուան եւ գարնանային ցուցահանդէս-վաճառք, ուր տաղաւարներ էր տրամադրուել պարսկական երկու բարեգործական ընկերութիւնների եւ «Ակունք» կենտրոնին, յոյժ գնահատուելով պատկան պատասխանատուների կողմից:

- Միութեան 43 եւ 44ամեակների նշում:
- Նախատեսուած ծրագրից դուրս, 2007 թուականի Սեպտեմբերի 27ին կազմակերպւեց պատանեկան ուրախ երեկոյ, դպրոցա-



Մարզալանէն ներս գործող լողաւազաններէն մէկը:

կան տարեմուտի առիթով՝ եւ «Առաջին Զանգ» նշանաբանով:

Միուժինը 2007ի սկզբում հաշուում էր 162 անդամ, ներկայիս՝ 179 անդամ:

Բ. ԱՐՈՒԵՍՏԻՑ ՄԻՈՒԹԻՒՆ

Արուեստից միուժինը ունի իր գրասենեակը, որը բանուկ է ամէն օր ի բացառեալ Ուրբաթ օրերից եւ գրասենեակի պատասխանատու, որը վարում է միուժեան եւ գրասենեակին կապուող բոլոր աշխատանքները եւ կազմում վարչութեան նիստերի արձանագրութիւնները:

Խմբերի վարչական աշխատանքները կատարուել են վարչութեան կողմից նշանակուած պատասխանատուների միջոցով:

Արուեստից միուժեան յարկի տակ աշխատել են․-

«Արարատ» Պարի դպրոցը

Դպրոցի գեղարուեստական ղեկավարն է Հայաստանի վաստակաւոր արտիստ՝ Կարինէ Ղազարեանը, փորձավարները՝ Անահիտ Աւետեանը, Թինա Անտոնը, Լինտա Սարգսեանը եւ Նաթալի Մուրատեանը: Դպրոցը ունի շուրջ 100 սաներ, 5 խմբերում, որոնք տարիքային բաժանումներով շաբաթական 2 պահ փորձեր են անցկացնում: 2008 թրուականի Յունուարից, սկսուել է շաբաթական 1 պահ այրոպիքի դասարաններ, 18ից վեր անդամների համար:

Կեանքի է կոչուել 3 հոգուց բաղկացած պատասխանատու կազմ, որը վարում է դպրոցին կապուած վարչական աշխատանքները:

Դպրոցն ամէն տարի ունեցել է իր տարեկան ելոյթները, իր մասնակցութիւնն է բերել ազգային-կրօնական տօներին, մարզամշակութային, համահայկական մրցութիւնների 40ամեակի եւ համադպրոցական մրցութիւնների բացման հանդիսութիւններին: Միատեղ ելոյթ է ունեցել Հ. Ուս. «Զհարմահար» միուժեան պարախմբի հետ մարզաւանում: Ինչպէս անցեալում, այս շրջանում եւս, պարսկական «Դահեշուր» բարեգործական հաստատութեան հետ համագործակցաբար, տարեկան ելոյթների գիշերներին՝ յատկացուել է ոչ-հայ կանանց, ի շահ՝ քաղցքեղից տառապող մանուկների:

Դպրոցը ղեկավարուում է արհեստավարժ հիմունքներով եւ բարձր մակարդակով:

«Արարատ» երիտասարդական եւ մանկական երգչախմբեր

Երգչախումբը ղեկավարում է Հայաստանի Խաչատուր Աբովեանի անուան Երեւանի պետական մանկավարժական համալսարանի դասախօս Արաքս Խաչատրեանը: Նուազագոյնը շաբաթական երկու պահ փորձեր են տեղի ունենում Նոբա-



450 հանդիսական ընդունող «Կոմիտաս» սրահը:

հարի կենտրոնատեղիում: Խումբը ունի 28 անդամներ:

Երգչախումբը եւս մասնակցել է ազգային-կրօնական ձեռնարկներին, 2007 թրուականին ունեցել է իր տարեկան համերգը եւ Ուրմիոյ մասնաճիւղի հրաւերով ելոյթ է ունեցել Ուրմիայում:

2008 թրուականի Օգոստոսին, «Մէկ ազգ, մէկ մշակոյթ» փառատօնի կազմակերպիչների հրաւէ-

րին արձագանգելով, Արուեստից միուժեան վարչութեան որոշումով եւ Կենտրոնական Վարչութեան հաստատումով ու հովանաւորութեամբ՝ երգչախումբը մեկնեց Հայաստան եւ համերգներով հանդէս եկաւ Արամ Խաչատրեանի անուան համերգասրահում եւ Գիւմրիում ընդառաջուեց արուեստագէտների եւ արուեստասէրների կողմից: Ճամբորդութիւնը բազմանշանակ դրական արդիւնքներ ունեցաւ:

«Արարատ» մանկական երգչախմբի ղեկավարն է Գիտա Սարգսեանը. խումբը անդամների նուազելու պատճառով ժամանակաւորապէս, վարչութեան որոշումով, դադարեցրեց իր աշխատանքները, ապա վերսկսեց անդամների աւելանալուց յետոյ:

Ներկայիս խումբն ունի 8 անդամներ եւ շաբաթական մէկ պահ փորձեր է ունենում մարզաւանում:

«Շանթ ու Շանթիկ», «Արարատ» երիտասարդական եւ «Ա. Աղամալեան» թատերախմբերը

-«Շանթ ու Շանթիկ» թատերախմբեր

30ից աւելի անդամներից կազմուած խումբը, տարբեր տարիքային բաժանումներով, սիրալոյսով կերպով ղեկավարում է Ռուբիկ Մկրտիչ Պետրոսեանը եւ փորձերը կանոնաւոր կերպով շաբաթական 3 պահ տեղի են ունենում Նոբահարի կենտրոնատեղիում:

Այս տարի լրացաւ «Շանթ ու Շանթիկ» թատերախմբերի 20ամեակը եւ այդ առիթով 5 գիշեր «Կոմիտաս» սրահում բեմադրուեց Յովհաննէս Թումանեանի «Ազահութեան վերջը» թատերերգութիւնը, նաեւ տօնուեց խմբի 20ամեակը:

«Արարատ» երիտասարդական թատերախումբը, Սեդրակ Գոլամանեանի ղեկավարութեամբ, իր աշխատանքը սկսեց 2007 թրուականի Օգոստոսին եւ 2008 թրուականի Յունուարին, 3 գիշեր բեմադրուեց «Շիտնց Միհրան» թատերերգութիւնը: Յաւօք, խմբի թուի աստիճանական նօսրացումով, ինքնըստինքեան դադարեց խմբի աշխատանքները:

Գարբիէլ Տիքիճեանի ղեկավարութեամբ, 2007 թրուականի Մարտին, 2 գիշեր բեմադրուեց Օկիւստ Սթիւպերկի «Միս ձիւրի» ներկայացումը, որը կրկնուեց Յունիս ամսին եւս:



Դ.Ս.Ա.Կ.ի մարզալանձն
ներս կառուցուած
մատուռ (1987):

Հայաստանի անուանի արուեստագէտ, բեմադրիչ եւ դե-
րասան Աշոտ Ադամեանը Արուեստից միութեան հրաւերով
ժամանեց Թեհրան, թատրոնի դասընթացքներ եւ բեմադրու-
թիւն ունենալու նպատակով. առ այդ՝ համայնքի փորձառու
դերասաններով եւ թատերասէր սկսնակներով կազմուեց մի
խումբ, որոնք կարճ ժամանակահատուածում, բայց խտաց-
ւած պարապմունքներով եւ փորձերով, 2008 թուականի Դեկ-
տեմբերի 19, 25 եւ 26ին, Աշոտ Ադամեանի ղեկավարութեամբ
բեմադրեցին Ուիլյըմ Սարոյեանի ծննդեան 100ամեակին
նուիրւած «Ուզենք, չուզենք, հայ ենք» թատերգութիւնը:

Այս շրջագծում, Դեկտեմբերի 18ին տեղի ունեցաւ յրեւե-
նական երեկոյ, նուիրուած հայ ազգի մեծ գրող՝ Ուիլյըմ Սա-
րոյեանի ծննդեան 100ամեակին:

Ձեռնարկներ

2007 թուականին, Մայիս ամսում տեղի ունեցող բոլոր
ձեռնարկները նուիրուեցին Հայաստանի Ա. Հանրապետու-
թեան կերտման՝ Մայիս 28ին, իր անկիւնադարձային նշանա-
կութեան համար եւ ելոյթների շարանը անուանուեց «Մայիս-
եան յաղթանակի փառատօն»: Փառատօնի ընթացքում 7 գի-
շեր ելոյթներ են տեղի ունեցել մասնակցութեամբ Հայաստա-
նի արուեստագէտների, համայնքի պատանի եւ երիտասարդ
դասական ոճով կատարողների եւ «Արարատ» երգչախմբի
տարեկան համերգ:

2007 եւ 2008 թուականներին տօնուէլ է «Մշակոյթի տօն»ը:
2007ին, արձագանգելով Կենտրոնական Վարչութեան որոշ-
ման, «Մշակոյթի տօն»ի ծրագրերը տեղի են ունեցել հայահոծ
քաղաքամասերի կենտրոններում, իսկ 2008 թուականին, նոյն
առիթով կազմակերպուել է մանկական տօնախմբութիւն,
որը ընդարձակ ընդառաջում է գտել համայնքի կողմից:

Կայացել են հասութեաբեր ձեռնարկներ՝ Հայաստանից
հրաւիրուած երգիչ-երգչուհիների մասնակցութեամբ:

Այս շրջանում ներքին ուժերով կազմակերպուել է 19 ձեռ-
նարկ, իսկ 8 ձեռնարկ՝ Հայաստանից հրաւիրուած արուես-
տագէտներով եւ խմբերով: Միութիւնը 2007ի սկզբում հաշ-
ուում էր 235 անդամ, ներկայիս՝ 241 անդամ:

Գ. ՄԱՐԶԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՆ

Մարզական միութիւնը ունի իր գրասենեակները (վարչու-
թեան եւ թեհիսի), ուր աշխատում են 4 պաշտօնեաներ:

Մարզական միութեան վարչութիւնը պաս-
քեթպոլ, թեթեւ ատլէթ, թենիս, վոլիպոլ,
փինկ-փոնկ, լող, սրահի ժայռամագլցում,
բռնցքամարտ, թեքուանտօ, ծանրաբարձու-
թիւն եւ երէցների Ֆուտպոլ մարզաձեւերին
վերահասութիւն տալու եւ ղեկավարելու
նպատակով, նշանակել է յանձնախմբեր կամ
անհատ պատասխանատուներ, որոնց հետ
հանդիպումներ ունենալով, բոլոր բնագա-
ւառներում տարուող աշխատանքների հա-
մար համապատասխան որոշումներ է կայացը-
րել եւ յանձնել գործադրման:

Մարզական միութեան վարչութեան միջո-
ցով կեանքի են կոչուել ժամանակաւոր յանձ-
նախմբեր տարբեր միջոցառումների եւ մրցաշարերի կազմա-
կերպման համար, ինչպէս օրինակ՝ 2007 եւ 2008 թուականի 31
եւ 32րդ համադպրոցական մրցութիւններ, 2007 թուականի
մարզամշակութային փառատօն, 2008 թուականի 40րդ հա-
մահայկական խաղերի գործադիր յանձնախումբ, 2007, 2008
եւ 2009 թուականների 26, 27 եւ 28րդ Ֆուլթայի «Արարատ-
եան դաւաթ», 2007 եւ 2008 թուականների 19 եւ 20րդ Նոր
Զուղայի «Գարնանային խաղեր», 2007 եւ 2008 թուականի
25րդ (Գեարդաբաղում) եւ 26րդ (Թաւրիգում) միջ-մասնաձիւ-
ղային խաղեր: Նաեւ՝ մնայուն անձնակազմով նշանակել է ձեռ-
նարկներ եւ դաշտահանդէսներ կազմակերպող յանձնախումբ:

Պասքեթպոլի մարզաձեւում Միութեան յարկի տակ փոր-
ձեր են անցկացնում տղոց եւ աղջկանց մինի, կրտսեր, պատա-
նեկան, երիտասարդական, թիւ 1 եւ երէց խմբերը: Թէ՛ աղջիկ-
ների եւ թէ՛ տղաների թիւ 1 խմբերը ղեկավարուում են արհես-
տավարժ հիմունքներով, գլխաւոր մարզիչ, մարզիչի օգնա-
կան, տեխնիկական ղեկավարման յանձնախումբ, մարմնա-
մարզիչ եւ վիճակագրողի միջոցով:

Տղոց թիւ 1 խումբը 2008 թուականին մասնակցեց «Սուփրը
լիկա»յի մրցութիւններին եւ 12 խմբերի մէջ զբաւեց 3րդ տե-
ղը: Նոյն թուականին խմբին յաջողուեց ներառուել լաւագոյն
խմբերում: Խումբը աշխուժացնելու եւ առաւել որակաւորե-
լու նպատակով, մասնագիտական քննութիւններից եւ բա-
նակցութիւններից յետոյ պայմանագրեր կնքուեցին իրանա-
հայ լաւագոյն մարզիչների հետ, որոնց միացան նաեւ արտա-
սահմանից հրաւիրուած ալթազգի երկու մարզիչներ: Մարզա-
կան միութեան վարչութեան առաջարկով եւ Կենտրոնական
Վարչութեան հաստատումով, խումբը 2009 թուականին եւս
մասնակցում է «Սուփրը լիկա»յի մրցաշարին:

Հարկ է նշել, որ տղոց թիւ 1 խմբի անդամ Սուրէն Տէր Պօ-
ղոսեանը մաս է կազմում Իրանի պասքեթպոլի երիտասար-
դական հաւաքականին, իսկ Արթիւն Իւսէֆեանը, Էդնա Իսայ-
եանը եւ Նարէ Արտաշեանը 2007 թուականի Ապրիլին, մարմ-
նակրթական կազմակերպութեան Թեհրանի գերատեսչու-
թեան կողմից գնահատուեցին եւ պարգեւատրուեցին, որպէս
լաւագոյն մարզիչներ:

Աղջկանց թիւ 1 խումբը 2007 թուականի երկրի մակարդա-
կում անմրցակից ախոյեան հանդիսանալով, 2008 թուականին

եւս մասնակցեց «Սուփրը լիկա»յի մրցաշարին եւ գրաւեց 2րդ տեղը: 2009 թուականին խումբը կրկին մասնակցում է նոյն մրցաշարին: «Սուփրը լիկա»յի մրցութիւններում լաւագոյնս հանդէս գալու համար, ամէն շրջան 2 մարզիկներ հրաւիրուել են Հայաստանից: Խմբի անդամներ էդնա Իսայեանը, Նարէ Արտաշեանը եւ Մոնիկա Մողերեանը տարբեր առիթներով հրաւիրուել են Իրանի պասքեթպոլի հաւաքականի ընտրական փորձերին եւ 2007 թուականի Հոկտեմբերին խմբի հետ մեկնել են Մալեզիա:

Մարզական միութեան վարչութիւնը նպատակադրել է հիմնել պասքեթպոլի դպրոց, առաջը իր աշխատանքը կենտրոնացնելով կրտսերների խմբի վրայ, կեանքի կոչեց մի ենթալանձնախումբ՝ Ժողէֆ Նազարեանի պատասխանատուութեամբ: Ենթալանձնախումբի հետեւողական աշխատանքի շնորհիւ կրտսերների թիւը շօշափելի յաւելում է արձանագրել: Խումբը որակապէս նաեւ բարձր մակարդակում է գտնուում: 2007 թուականի Թեհրանի լիկայի մրցութիւններին, Հ.Մ.Ա.Կ-ի մինի պասքեթպոլի խումբը մասնակցող 26 խմբերի միջեւ գրաւել է 4րդ տեղը: Իսկ 2008 թուականին նոյն մրցաշարում՝ 40 խմբերի միջեւ դարձեալ գրաւեց 4րդ տեղը: Նոյն թուականին «Սուփրը լիկա»յի մրցութիւններում յաջողեց գրաւել 4րդ տեղը:

Տղոց կրտսեր խումբը 2007 եւ 2008 թուականներին մասնակցելով Թեհրանի լիկայի մրցութիւններին երկու շրջանում եւս՝ հանդիսացել է 5րդը:

Հարկ է նշել, որ 2008 թուականին Իրանի մինիից երիտարդական պասքեթպոլի խմբերի յանձնախումբի պատասխանատու Ժողէֆ Նազարեանը ընտրուել է Իրանի մինի-պասքեթպոլի հաւաքականի պատասխանատու:

Աղջկանց կրտսեր խումբը 2007 թուականին Թեհրանի լիկայի մրցութիւններին գրաւեց 2րդ տեղը, իսկ աղջկանց երիտարդական խումբը նոյն թուականին Թեհրանի առաջին կարգի լիկայի մրցութիւններում յաջողեց ներառուել լաւագոյն չորս խմբերի շարքին:

Թեթեւ աթլէթիկ Մարզաձեւում, միութիւնը ունի աղջկանց եւ տղոց խմբեր, որոնք 2007 եւ 2008 թուականներին մասնակցել են Իրանի ակմբային լիկայի, Թեհրանի լիկայի, «Ռամատանի գաւաթ»ի, «Դահեյէ Ֆաթր» գաւաթի ու Թեհրանի հաւաքականի ընտրութեան մրցութիւններին: Աղջկանց խմբի անդամները իրենց կանոնաւոր փորձերի բերումով շատ լաւ յառաջադիմութիւն են ունեցել եւ մասնակցած մրցութիւններում արձանագրել են յաջողութիւններ: «Ռամատանի գաւաթ» մրցաշարում՝ խմբի անդամներ Մեղմիկ Ղարիպեանը եւ Ռամեյլա Ղարաբէգեանը հանդիսացել են առաջին, Սիլվա Յակոբեանը եւ Արփի Իսկանտարեանը՝ երկրորդ, իսկ Նինելա Դաւթեանը եւ Դրոթի Փալոսը՝ երրորդ:

Յատկանշական է, որ թեթեւ աթլէթիկ մարզիկ էդուարդ Մանկասարեանը Թեհրանից մասնակցելով Հայաստանի 4րդ համահայկական համաշխարհային մրցութիւններին, միակ ոսկէ մետալակիրն է եղել:



Թենիսի մարզաձեւում, եղանակի հետ համընթաց, փորձերը կայացել են թենիսի դաշտում եւ «Սասունցի Դաւիթ» սրահում: Կազմակերպուել են մրցութիւններ եւ խնճոյքներ՝ շահողների պատուին: 2007 թուականին խմբի անդամները մասնակցել են Թեհրանի հաւաքական խմբի ընտրական մրցութիւններին, որտեղ աղջկանց խմբի անդամներ Գարմէն Ղարաբէգլուն եւ Անի Նազարեանը Յրդն եւ հանդիսացել: 18 տարեկանից վար տարիքային բաժանումով մրցութիւններում, խմբի անդամ Մաթիլտա Մուրատեանը առաջինն է հանդիսացել: Նոյն թուականին, 16ից եւ 14ից վար մրցութիւններում Մեղեդի Մուրատեանը գրաւել է Յրդ եւ 2րդ տեղը:

2008 թուականին, խմբի անդամ Անի Նազարեանը ընդգրկուել է Իրանի թենիսի հաւաքական խմբի մէջ:

Վոլիպոլի մարզաձեւում փորձեր են անցկացնում տղոց երիտասարդական, պատանեկան եւ աղջկանց թիւ 1 եւ մինի-վոլիպոլի խմբերը: Անցեալ շրջանի սկզբում աշխատել է նաեւ տղոց թիւ 1 խումբը, որը աղջկանց թիւ 1 խմբի հետ, որպէս Թեհրանի ներկայացուցիչներ, մասնակցել են Հայաստանի 4րդ համահայկական համաշխարհային մրցութիւններին:

2007 թուականին, աղջկանց թիւ 1 խումբը, Թեհրանի Յրդ քաղաքամասի միակ խումբը լինելով, նոյն քաղաքապետարանի անունով մասնակցեց «Ռամատանի գաւաթ» մրցաշարին եւ 25 խմբերի միջեւ գրաւեց 4րդ տեղը: Նոյն թուականին, աղջկանց թիւ 1 խումբը մասնակցեց Թեհրանի 2րդ կարգի լիկայի մրցութիւններին եւ Յրդը հանդիսանալով, յաջողեց ներառուել առաջին կարգի լիկայի խմբերում: Պատանեկան խմբերը մասնակցում են Թեհրանի լիկայի մրցութիւններին:

Փինկ-փոնկի մարզաձեւում տարիքային տարբեր բաժանումներով մարզիկներ փորձեր են անցկացնում: Տղոց խումբը 2007 թուականին առաջին անգամ լինելով մասնակցեց Թեհրանի լիկայի մրցութիւններին:

Լողի մարզաձեւում միութիւնը ունի տղոց եւ աղջկանց խմբեր, որոնք աշխոյժ փորձերից յետոյ մասնակցեցին Հայաստանի 4րդ համահայկական համաշխարհային խաղերին՝ լաւ արդիւնքներ ձեռք բերելով:

2007 թուականին միութեան լողի խմբերը առաջին անգամը լինելով մասնակցել են Թեհրանի «Լաւագոյն լիկա»յի մրցութիւններին:

Լողի խմբի անդամներ էմին Նովչատեանը եւ Գամբեր Դիլանջեանը մաս են կազմում Իրանի լողի հաւաքականին, իսկ

Արամ է Աղազարեանը՝ Իրանի Ուոլթերփոլոյի հաւաքական խմբին:

Սրահի Ժայռամագլցման մարզաձեւի փորձերին մասնակցութիւն են բերում 16 տարեկանից վար մարզիկներ:

Ժայռամագլցման պատը 16 տարեկանից վեր մարզիկների համար եւս օգտագործելի դարձնելու նպատակով, ընդարձակուեց եւ կառուցուեց նոր պատ:

Բռնցքամարտի մարզաձեւում կանոնաւոր փորձեր է տեղի ունենում: 2007 թուականի Յուլիսին խումբը 4 մարզիկներով մասնակցեց Շեմիրանաթ շրջանի մրցութիւններին, որոնցից Նարայէյ Իսրայէլեանը եւ Վանասիս Շահբանդարեանը տարբեր քաշերում գրաւեցին 3րդ տեղերը:

2008 թուականին խումբը մասնակցելով տեղական մի մրցաշարքի, գրաւել է 4րդ տեղը եւ ստացել «Վարքի գաւաթ»ը:

2008 թուականին, խմբի մարզիչ Արմէն Սապահգորեանը ընտրուել է Շեմիրանաթ շրջանի իրաւարարների կոմիտէի նախագահ:

Թեքուանտոյի մարզաձեւում միութեան մարզիկները շաբաթական 3 պահ կանոնաւոր փորձեր են կատարում: 2007 եւ 2008 թուականներին մարզաւանում տեղի ունեցաւ Թեքուանտոյի 4րդ շրջանի դասիների որակաւորման քննութիւնը:

Ծանրաբարձութեան մարզաձեւը երկար տարիների դադարից յետոյ 2007 թուականի Յունիսից վերսկսուեց՝ մարզական միութեան վարչութեան Իրանի ծանրաբարձութեան Ֆետերացիայի առաջարկին ընդառաջելով, որի արդիւնքում Ֆետերացիան տրամադրեց մարզիչ եւ անհրաժեշտ գոյքեր: Ծանրաբարձութեան փորձերը կանոնաւոր կերպով շարունակուում են մարզաւանում:

Նշելի է, որ զանազան մրցութիւնների մետալակիր եւ Լիբանանի ծանրաբարձութեան Ֆետերացիայի աստեղապիր Յարութիւն Չոպանեանի այցելութիւնը եւ ներկայութիւնը ծանրաբարձութեան փորձերին մեծ ոգեւորութիւն առաջացրեց մարզիկների մօտ եւ առիթ ստեղծեց Իրանի Ֆետերացիայից որակեալ գոյքեր ստանալու համար:

Երէցների Ֆուլթայլի խումբը կանոնաւոր փորձեր է ունեցել եւ մասնակցել է զանազան մրցաշարերի եւ արժանացել «Վարքի գաւաթ»ի:

Մարմնամարզութեան մարզաձեւում, Մ.Մ.Կ.Ա.Բ. անւան տակ, հիմնականում մարզուում են 6-12 տարեկան շուրջ 40 մանուկներ:

Մարզական միութեան վարչութեան նշանակած յանձնախմբերի միջոցով կազմակերպուել են 31 եւ 32րդ շրջանի համադպրոցական մրցութիւնները Մարտ ամսուան ընթացքում, նուիրուած՝ հայոց լեզուի տարուան եւ համահայկական մրցութիւնների 40ամեակին:

2007 թուականին, 40րդ համահայկական մրցութիւնները գուզադիպելով Հայաստանի 4րդ համահայկական համաշխարհային մրցութիւններին, որոշում ընդունուեց կազմակերպել մարզամշակութային փառատօն: Առաջին անգամ լի-

Թեմիսի դաշտ:



նելով, Սեպտեմբերի 11-21ը 880 մասնակիցներով տեղի ունեցաւ մարզամշակութային փառատօն: Մարզական մրցութիւնները կայացան ըստ համահայկական խաղերի օրէնքների, իսկ մշակութային ծրագրերը 8 օր տեւողութեամբ տեղի ունեցան մարզաւանի Ֆուլթայլի դաշտին կից՝ բացօթեայ շրջափակում:

2008 թուականի Սեպտեմբերի 11-19ը տեղի ունեցան 40րդ համահայկական խաղերը, 1100 մարզիկների մասնակցութեամբ: Համաձայն 22րդ Պատգամաւորական Ժողովի տրամադրութեան, որոշում ընդունուեց շուքով տօնել 40ամեակը: Շրջանի սկզբից, կեանքի կոչուեցին յանձնախմբեր եւ տեղի ունեցաւ աշխատանքների բաժանում: Մրցութիւնները կազմակերպուել եւ համապատասխան դասաւորումները տայլու աշխատանքը յանձնարարուեց մարզական միութեան վարչութեան, որի պատասխանատուութիւնը ստանձնեց վարչութեան նախագահ Ռազմիկ Ագիգեանը:

40ամեակի հանդիսաւոր բացումը, որ պիտի տեղի ունենար Սեպտեմբերի 10ին, Արեւմտահայաստանից վերադարձող ուխտաւորների դժբախտ պատահարի հետեւանքով, ի յարգանս զոհուածների ընտանիքների յետաձգուեց 2 օրով եւ տեղի ունեցաւ Սեպտեմբերի 12ին, մասնակցութեամբ՝ Հայաստանի աստղերի եւ համայնքում աշխատող 4 պարախմբերի, որի գեղարուեստական ղեկավարման համար Թեհրան էր հրաւիրուել Հայաստանի Ժողովրդական արտիստ Վանուշ Խանամիրեանը:

Մրցութիւններին մասնակցում էին Հայաստանի, Արցախի, Ախալքալաքի, Ջաւախքի եւ Իրանի հայահոծ քաղաքների խմբերը:

2007 եւ 2008 թուականներին կազմակերպուել են 26 եւ 27րդ շրջանի Ֆուլթայլի «Արարատեան գաւաթ»ի մրցաշարերը:

Մարզական միութեան վարչութեան միջոցով կազմակերպուել են մի շարք ուրախ երեկոներ եւ դաշտահանութիւններ: Համաձայն անցեալ շրջանի վարչութեան որոշման, որպէս հասութեաբեր ձեռնարկ, 2007 թուականի Յունիսի 21ին կայացաւ «Ողջոյն Թաւրիզ» հանդիսութիւնը:

2007 եւ 2008 թուականներին Դեկտեմբերին, Իրանի լեռնագրանցների միութեան հետ համագործակցաբար, տօնուել է «Լեռնաստանի օրը», կենտրոնատեղիի «Կոմիտաս» սրահում, ուր հրաւիրուած էին մեծ թուով հայ ու պարսիկ լեռնագնացներ:

2007 եւ 2008 թուականների ամրան կազմակերպուել է երեխաների ամառային մարզական դասընթացներ, ամէն տարի շուրջ 200 մանուկների մասնակցութեամբ, ուր մանուկները ծանօթացել են մարզական տարբեր բնագաւառներին հետ, նաեւ ունեցել են դաստիարակչական աշխատանքներ:

Համաձայն 22րդ Պատգամաւորական ժողովի որոշման, 2007 թուականին, Կենտրոնական Վարչութեան, մարզական միութեան վարչութեան եւ մարզաւանի վարիչ մարմնի հետ համախորհուրդ, կատարուեց մարմնամարզութեան սրահի կահաւորումը եւ շահարկման յանձնուեց 2008 թուականի Յունիսից:

Միութիւնը 2007ի սկզբում հաշուում էր 795 անդամ, ներկայիս՝ 858 անդամ:

Դ. ՍԿԱՈՒՏԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ

Սկաուտական Միութեան 16րդ բարձրագոյն աստիճանաւորների ժողովից ընտրուած սկաուտապետ խմբապետ Արբի Զոհրաբեանը իր աշխատանքը սկսեց 2007 թուականի Փետրուարի 2ին, եւ նշանակեց հետեւեալ կազմը, որպէս գերագոյն կազմ.-

Խմբապետ՝ Արմինէ Մարգարեան- գերագոյն կազմի խորհրդատու անդամ.

Խմբապետ՝ Շանթ Բաղրամեան- արիների հատուածի պատասխանատու.

Դեր խմբապետ՝ Մարիէթ Մարտիրոսեան- կրտսերների հատուածի պատասխանատու.

Դեր խմբապետ՝ Ատրինէ Դարասեան- արեւոյշների հատուածի պատասխանատու.

Միութիւնը շարունակել է 15րդ բարձրագոյն աստիճանաւորների ժողովի ճշգրտ ուղեգծի գործադրումը ըստ հետեւեալի.-

- Համաձայն սկաուտական միութեան նախատեսած կառուցի, ապագայ ղեկավար մարդու ղեկավարակելու համար, զարկ է տրուել խմբային աշխատանքներին, ընդգրկելով խմբակի բանակումներ:

- Ելնելով այն մտահոգութիւնից, որ միութեան անդամները չըմնաւարտ լինելուց յետոյ չթողնեն կազմակերպութիւնը եւ ներգրաւուեն Արուեստից կամ Մարզական միութիւններում, ծրագրուել է մի շարք խմբային արտահերթ աշխատանքներ, որոնցից կարելի է նշել երգչախումբը, նուագախումբը, ասմունքի խումբը եւ այլն:

- Սկաուտական աշխատանքները աւելի որակաւորելու, նաեւ միութեան ղեկավարման համակարգը կարգաւորելու նպատակով, նկատի են առնուել չափանիշեր՝ աստիճաններ ստանալու համար:

Շրջանի սկզբում, ղեկավար մարդու ղեկավարի եւ շարքերի նօսրացման պատճառով կազմալուծուեցին արիների եւ արեւոյշների թիւ 5 խմբերը:

Սկաուտապետի անմիջական հսկողութեան ներքոյ կեանքի կոչուեց մի կազմ, միութեան արտաքին յարաբերութիւնների զարգացման ու կարգաւորման ի խնդիր:

Միութեան աշխատանքների կարգաւորման նպատակով նշանակուեց նիւթականի աւագ պատասխանատու:

Սերտ յարաբերութիւն է պահուել ծնողների հետ եւ կեանքի է կոչուել Ծնողական Խորհուրդ, որը միութեան տարբեր աշխատանքներում օգտակար է հանդիսացել նրան:

Շարունակուել են երէց փաղանգի կանոնաւոր շաբաթական դնահատելի աշխատանքները, «Ակունք» կենտրոնի մարմնամտային խանգարումներով երեխաների հետ:

Անդամների թիւը աւելացնելու նպատակով, Թեհրանի հայոց թեմի կրթական խորհրդի հետ համագործակցութեամբ, կազմակերպել են մանկական դաշտահանդէս:

2007 թուականի Փետրուարին, «Էլպիս Ֆերահեան» մանկապարտէզի Ծնողական Խորհրդի հետ համագործակցութեամբ, կազմակերպել են մանկական դաշտահանդէս:

2007 եւ 2008 թուականներին, միութիւնը կազմակերպել է իր տարեկան երդման արարողութիւնները: 2007 թուականի երդման արարողութիւնը նուիրուած է եղել համաշխարհային սկաուտական շարժման հիմնադրման 100ամեակին:

Միութիւնը կազմակերպել է բանակումներ՝ տարբեր քաղաքներում, ինչպէս օրինակ՝ Նոր Զուղայում, Ս. Թադէի Վանքում, Գորգանում, Անգալիում, Շիրազում, Հայկաշենում եւ Ուրմիայում:

2007 եւ 2008 թուականներին տեղի են ունեցել միութեան ողիմպիական խաղերը:

Սկաուտական միութիւնը մասնակցել է «Սիւրիան», «Նայիրի» եւ «Րաֆֆի» միութիւնների սկաուտական երդման արարողութիւններին:

2008 թուականի Յունիսին, Հ.Մ.Ը.Մ.-Ֆրանսի մասնաճիւղի հրաւերով, սկաուտական միութիւնը 9 հոգուց բաղկացած բարձրաստիճան պատուիրակութեամբ, մասնակցել է Ֆրանսիայի 4րդ բանակումին, որին մասնակցում էին Հ.Մ.Ը.Մ.-ի Ֆրանսիայի, Շուէտի, Հայաստանի եւ Հոլանտիայի մասնաճիւղերից: Ցատկանշական է, որ սոյն բանակումին, Հ.Մ.Ա.Կ.-ի սկաուտները արժանացել են «Ամենագերագանց պատուիրակութիւն» կոչումին:

2008 թուականի Սեպտեմբերին, սկաուտական միութիւնը երկու ներկայացուցիչով մասնակցել է Հ.Մ.Ը.Մ.-ի խմբապետական համագումարին:

Միութիւնը 2007ի սկզբում հաշուում էր 375 անդամ, ներկայիս՝ 327 անդամ:

ԹԱՒԻԻԶԻ ՄԱՍՆԱԾԻՂ

Մասնաճիւղը իր աշխատանքները շարունակել է Երէցների, Արուեստից, Մարզական եւ Սկաուտական բաժանմունքներով: Կազմակերպել է միջ-վարչական հանդիպումներ՝ բաժանմունքների վարչութիւնների մասնակցութեամբ եւ վերահասութիւն տուել տարուող աշխատանքներին:

Մասնաճիւղի վարչութիւնը միշտ կապի մէջ է եղել Կենտրոնական Վարչութեան, Ազգային իշխանութեան եւ հարկ նկատուած պարագային պետական հաստատութիւնների հետ:

Վարչութիւնը կազմակերպել է թէյասեղաններ՝ մասնաճիւղին օժանդակողների պատուին, ուրախ երեկոներ եւ մասնաճիւղի 53 եւ 54ամեակները:

Մասնաճիւղի Երէցների բաժանմունքը նիւթապէս եւ բա-

րոյապէս մասնաճիւղին սատարելու նպատակով կազմակերպել է ուրախ երեկոններ, ցուցահանդէս-վաճառք Նոր տարւան առիթով, ազգային-կրօնական տօների առիթով ճաշկերպութիւններ եւ այլն:

Արուեստից բաժանմունքը աշխոյժ աշխատանք է ցուցաբերել, կազմակերպել է զբոսը ցուցահանդէս եւ իրեն է վստահուել մասնաճիւղի գրադարանի վերահսկումը: Կազմակերպել է դասախօսութիւններ, Ապրիլ 24ի առիթով Ֆիլմի ցուցադրում, ուրախ ժամանցների ծրագրում՝ ազգային-կրօնական տօների առիթով եւ այլն:

Մարզական բաժանմունքի աշխատանքները այս շրջան եւս յաջող են ընթացել: Բաժանմունքի վարչութիւնը ոչ-հայ համայնքի հետ յարաբերութիւններ ստեղծելու նպատակով կազմակերպել է պասքէթպոլի եւ փինկ-փոնկի մի շարք մրցութիւններ տեղական խմբերի հետ:

Մասնաճիւղի մարզական խմբերը 2007 թուականին մասնակցել են միջ-մասնաճիւղային մրցութիւններին Գեարդաբաղում, իսկ 2008ին մրցութիւնները տեղի են ունեցել Թաւրիզում: 2007 եւ 2008ին մասնակցել են մարզամշակութային փառատօնին եւ 40րդ համահայկական մրցութիւններին: 2007 թուականին նիւթական մեծ դժուարութիւններ դիմագրաւելով, մասնակցել են Հայաստանի համահայկական համաշխարհային 4րդ խաղերին. այս առնչութեամբ լիարժէք օժանդակութիւն է ցուցաբերել խորհրդարանի հիւսիսային իրանահայութեան պատգամաւոր՝ ճրտգ. Գեորգ Վարդանեանը: Բաժանմունքի խմբերը մասնակցել են Նոր Զուգայի գարնանային խաղերին: Վարչութիւնը կազմակերպել է մարզական գիտելիքների մրցութիւններ եւ «Նայիրեան» գաւաթի խաղեր:

2007 թուականի Յուլիսին, մասնաճիւղի 6 անդամներ մասնակցել են «Բազէ» երիտասարդական հաւաքին, Հայաստանում:

Սկսած բաժանմունքը իր գերազուցելի կազմով շարունակել է իր աշխատանքը, կազմակերպելով բանակումներ, սկսած բաժանմունքի երկրորդ երզման արարողութիւնը, որին ներկայ են գտնուել Կենտրոնական Վարչութեան անդամներ Էդուարդ Բաբախանեանը եւ Հրաչ Զարիֆեանը:

Մասնաճիւղը 2007ի սկզբում հաշուում էր 175 անդամ, ներկայիս՝ 175 անդամ:

ՈՒՐՄԻՈՅ ՄԱՍՆԱԾԻՂ

Մասնաճիւղի վարչութիւնը հիմնականում կենտրոնացել է մարզական բաժանմունքի տարած աշխատանքների վրայ: Վերսկսուել են կրտսերների բաժանմունքի աշխատանքները երկու դաստիարակով եւ նշանակուել է Ծնողական խորհուրդ: Արուեստից բաժանմունքը եւս վերսկսել է իր աշխատանքները: Բաժանմունքների անդամների եւ մասնաճիւղի վարչութեան համագործակցութեամբ տեղի են ունեցել մի շարք ձեռնարկներ, որոնցից կարելի է նշել երկու ուրախ երեկոյ՝ Զատիկական տօների առթիւ, 2 գեղարուեստական ձեռնարկ՝ Ապրիլ 24ի առիթով, երկու բանակում՝ Արուեստից բաժանմունքի նախաձեռնութեամբ՝ Նախիջևան եւ Ռահիվ



Փինկ-փոնկի եւ պարի սրահ:

գիւղերում, մարզական խմբերի մասնակցութիւնը երկու միջ-մասնաճիւղային մրցութիւններին, մասնակցութիւն մարզամշակութային փառատօնին եւ 40րդ համահայկական խաղերին, «Մշակոյթի տօն»ի առիթով ձեռնարկ, Նոր տարւան դիմաւորման հանդէս՝ Ուրմիայի Հ.Օ.Մ.ի հետ համագործակցաբար, Թեհրանից «Զարթօնք» պարախմբի ելոյթ՝ ղեկավարութեամբ Լոռեոս Աւետիսեանի, Հ.Մ.Ա.Կ.ի Արուեստից միութեան «Արարատ» երգչախմբի համերգ՝ ղեկավարութեամբ Արաքս Պաշատրեանի, Սկսած սկսած միութեան արիւնների թիւ 2 խմբի բանակում՝ Գեարդաբաղում:

Շրջանի երիտասարդութեան Արարատի յարկի տակ հաւաքելու նպատակով, մասնաճիւղի վարչութիւնը առաջարկեց Կենտրոնական Վարչութեան համակարգիչներ տրամադրելու մասնաճիւղին, համակարգիչի ուսուցման դասարաններ կազմակերպելու նպատակով: Կենտրոնական Վարչութիւնը ընդառաջեց առաջարկին եւ տրամադրեց 4 համակարգիչներ, համապատասխան ծրագրով եւ համակարգով: Այս աշխատանքը իրագործելու համար, շրջանի ազգային բարերար Էդիկ Մեջլումեանը 20 միլիոն ռիալ նուիրատուութիւն կատարեց:

Մասնաճիւղը 2007ի սկզբում հաշուում էր 115 անդամ, ներկայիս՝ 100 անդամ:

ԳԵԱՐԴԱԲԱԳԻ ՄԱՍՆԱԾԻՂ

Գեարդաբաղի մասնաճիւղի վարչութիւնը մասնաճիւղի անդամների մասնակցութեամբ կազմակերպել է Ապրիլ 24ի առիթով՝ ձեռնարկ, աշխոյժ մասնակցութիւն է բերել Ս. Գեորգ Զօրավարի տօնակատարութեան կազմակերպման աշխատանքներում, սերտ յարաբերութիւն եւ համագործակցութիւն է ցուցաբերել Ուրմիոյ Ազգային իշխանութեան եւ Գեարդաբաղի հոգաբարձութեան հետ՝ համայնքի խնդիրներին եւ դժուարութիւնների լուծման կապակցութեամբ, Գեարդաբաղի մասնաճիւղը իր համագործակցութիւնն է ցուցաբերել Թեհրանի եւ Թաւրիզի սկսած սկսած միութիւններին, բանակավայր տրամադրելու առումով: Մասնաճիւղի վարչութիւնը կազմակերպել է բազմաթիւ ուրախ երեկոններ երիտասարդութեան համար:

Մարզական բնագաւառում, մասնաճիւղը ունի պասքէթպոլ, փինկ-փոնկ, ճատրակ, թեթեւ աթլէթ եւ թենիս մարզաձեւերը եւ իր խմբերով մասնակցել է մարզամշակութային փա-

ուստոնին, 40րդ համահայկական մրցութիւններին, Նոր Զուղայի «Գարնանային» մրցութիւններին, Հայաստանի համահայկական համաշխարհային 4րդ խաղերին, որի իրազործման համար մեծապէս օժանդակել է Ատրպատականի թեմի թեմակալ Առաջնորդը: 25րդ միջ-մասնաճիւղային մրցութիւնները տեղի ունեցան Գեարդաբաղում, որտեղ ներկայ էր Կենտրոնական Վարչութեան փոխ նախագահ Հրաչ Զարիֆեանը: Այս բոլոր աշխատանքներում իր անմիջական օժանդակութեամբ ներկայութիւն է եղել Ուրմիոյ հոգեւոր հովիւ Անանիա Աբեղայ Գուճանեանը:

Մասնաճիւղի վարչութիւնը մշտական կապի մէջ է եղել Կենտրոնական Վարչութեան հետ:

Մասնաճիւղը 2007ի սկզբում հաշուում էր 45 անդամ, ներկայիս՝ 27 անդամ:

ՇԻՐԱԶԻ ՄԱՍՆԱԾԻՂ

Մասնաճիւղը իր աշխատանքը շարունակել է Երէջներէ, Արուեստից եւ Մարզական խմբերով, եւ անցեալի պէս, որպէս հաւաքատեղի օգտուել է Շիրազի «Հայ Տուն»ի սրահից:

Նախկինի պէս, սերտ յարաբերութիւն է պահուել տեղի ազգային իշխանութեան՝ Շիրազի Հայոց Եկեղեցական Վարչութեան եւ Շիրազի Հայ Կանանց Եկեղեցասէր Միութեան վարչութեան հետ:

Այս շրջանում մասնաճիւղի վարչութիւնը իր անդամների

մասնակցութեամբ իրականացրել է մի շարք ձեռնարկներ՝ թարգմանչաց, Վարդանանց եւ Զատկական տօների ու ձմեռնամուտի առիթներով՝ Եղեռնի բիւրաւոր նահատակների ոգեկոչման եւ Մայիս 28ի ձեռնարկներին, ստանձնել է գեղարուեստական բաժնի կազմակերպումը: Կազմակերպել է ուրախ երեկոներ եւ թէյասեղաններ: Նաեւ՝ Նոր Զուղայի Հայ Դատի յանձնախմբի նախաձեռնած «Ջաւախք» անուանումով երաժշտական փառատօն-մրցոյթին մասնաճիւղից մասնակցել է Նայիրի Յարութիւնեանը եւ գրաւել երկրորդ տեղը: Հ.Մ.Ա.Կ.ի սկսուտական միութեան խմբական բանակումը 2008 թուականի Յուլիսին կայացել է Շիրազում, որտեղ 24 ժամեայ ներկայութիւն են եղել մասնաճիւղի անդամները եւ գաղութի պատանիները: Լիբանանում կայացած «Հայ երիտասարդը՝ 21րդ դարի մարտահրաւէրների դէմ յանդիման» համագումարին մասնակցել է մասնաճիւղից մէկ անդամ: Մասնաճիւղի իգական «Կռունկ» երգչախումբը շարունակել է իր աշխատանքը եւ մասնակցել գաղութի բոլոր գեղարուեստական ձեռնարկներին:

Մասնաճիւղը 2007ի սկզբում հաշուում էր 27 անդամ, ներկայիս՝ 24 անդամ:

(Հատուածներ Գ.Մ.Ա.Կ.ի 39րդ նստաշրջանի Կեդրոնական Վարչութեան գործունէութեան տեղեկագիրէն)

with the complements of

Restaurant Al-Mayass



ԲԱՇ ԱՊԱՐԱՆԻ ՅՈՒՇԱԿՈԹՈՂԻ ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆ ԵՒ ՄԿԱՌԻՏԱԿԱՆ ԵՐԴՄԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆ

Թղթակից ԵՐԵՒԱՆ

28 Մայիսին, ի նշանաւորումն Հայաստանի Ա. անկախութեան հռչակման, Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ-ի Երեւանի, Աբովեանի, Գիւմրիի, Չարենցաւանի եւ Հրազդանի միաւորներից շուրջ 50 տարազաւոր սկաուտներ այցելեցին Բաշ Ապարանի հերոսամարտի յուշակոթող: Հանդիսաւոր տողանցքով ծաղիկներ դրուեցին յուշակոթողին եւ զօրավար Դրոյի շիրմաքարին, ապա զրոյց ունեցան Դրոյի եղբօրորդու, գեներալ Աստուածատուր Պետրոսեանի եւ «Մահապարտներ» գումարտակի մարտիկների հետ, լսեցին դասախօսութիւն Բաշ Ապարանի հերոսամարտի մանրամասների մասին, որից յետոյ մասնակեցեցին մշակութային ուրախ ծրագրի:



Օրուայ կէսին, սկաուտները Ապարանից մեկնեցին Աշտարակի ձորաբերանին վրայ խոյացող Սաղմոսավանք, որտեղ ճաշելուց եւ մի փոքր դադար առնելուց յետոյ, Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ-ի ընդհանուր խմբապետ եղբ. Ռոմանոս Պետրոսեանի եւ Վարչութեան ներկայացուցիչ եղբ. Վարդան Միրումեանի ղեկավարութեամբ տեղի ունեցաւ վերոնշեալ միաւորների շուրջ 40 նորագիր սկաուտների հանդիսաւոր երգման արարողութիւնը: Արարողութիւնից առաջ եղբ. Պետրոսեանի կողմից ներկայացուցեց դասախօսութիւն Ա. Հանրապետութեան, Մայիսեան յաղթանակների եւ Շուշիի ազատագրման թեմաներով: Անցկացուցեց նաեւ բարոյահոգեբանական զրոյց՝ հայկականութեան, կրօնի, ազգի եւ հայրենասիրութեան մասին:



Սաղմոսավանքի միջոցաւ մանր Աշտարակի «Հայրենապաշտ» երիտասարդական կազմակերպութեան լիտերներ, որոնք հետաքրքրութիւն ցուցաբերեցին մեր շարժման նկատմամբ եւ տրամադրութիւն յայտնեցին յառաջիկայումս Աշտարակ քաղա-

Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ-Ի ՄԱՍՆԱԿՅՈՒԹԻՒՆԸ՝ ՀԱՅԱՍՏԱՆ-ԱՐՑԱԽ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԺՈՂՈՎԻՆ

Թղթակից ԵՐԵՒԱՆ

Հայաստանեան մի շարք երիտասարդական կազմակերպութիւնների լիտերների հետ, Մայիսի 12-15, Արցախում գտնուեց նաեւ Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ-ի ընդհանուր խմբապետ եղբ. Ռոմանոս Պետրոսեան: Ծրագիրը

իրականացրեց Հ. Հանրապետութեան երիտասարդութեան եւ սպորտի նախարարութեան երիտասարդութեան հարցերի վարչութիւնը, մասնակցութեամբ մշակոյթի նախարարութեան, Արցախի երիտասարդութեան եւ սպորտի, մշակոյթի նախարարութիւնների: Ծրագիրը կրեց «Երիտասարդութիւն, իրականութիւն, հեռանկարներ- Արցախ» խորագիրը եւ նպատակադրեց ակտիւացնել Հայաստանի եւ Արցախի երիտասարդական կազմակերպութիւնների փոխ շփումները, բարձ-

րացնել Արցախի երիտասարդների հասարակական ակտիվությունը, ինչպես նաև համաժողովի ընթացքում ակտիվ քննարկումների միջոցով բացայայտել եւ վեր հանել ժամանակակից հայ երիտասարդութեանը յուզող խնդիրներն ու դրանց լուծման հնարաւոր միջոցները: Ծրագրի շրջանակներում իրականացուցին ինչպէս պաշտօնական հանդիպումներ եւ ընդունելություններ, այնպէս էլ եղան այցելություններ Ամարաս եւ Գանձասարի վանական համալիր: Հայաստան-Արցախ երիտասարդական կազմակերպությունների համաժողովը տեղի ունեցաւ Արցախի Մարտունի քաղաքի Մշակույթի Տանը: Ծրագրի ընթացքում մասնակիցներին Արցախի Ազգային Ժողովի նիստերի դահլիճում ընդունեց Ազգային Ժողովի նախագահ Աշոտ Ղուկեանը, որի հետ երիտասարդ լիտերները բաւականին երկար եւ հետաքրքիր հարց ու պատասխանի բռնուեցին:



Ծրագրի պաշտօնական մասը եզրափակուեց Շուշիի «Նարեկացի» մշակութային միութեան շէնքում բացուած Հայաստանի եւ Արցախի երիտասարդական կազմակերպությունների ցուցահանդէսով, որտեղ նաև ներկայացուեց Հ.Մ.Լ.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի բաւականին բովանդակալից տաղաւարը: Ծրագրի վերջում եղբ. Ռոմանոս Պետրոսեանը հանդիսաւորութեամբ «Նարեկացի» մշակութային կենտրոնի գրադարանին նուիրեց Հ.Մ.Լ.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի հրատարակած «Ես գայլիկ եմ» եւ «Ես սկառու եմ» գրքերից օրինակներ:

'Made from one single slice of natural Australian opal'

Classique

OPAL DIAL WATCH

Sarkis Der Bedrossian

*Sams Watchmaker Jeweller Pty. Ltd.
123 Clarence Street
Sydney 2000
Australia*

Phone: +61 2 9290 2199
fax: +61 2 9262 1630
Website: www.classiquewatches.com
Email: Info@classiquewatches.com



Սեւան Նազարեան ՓԱՐԻՋ

«Ո՛վ բանակում, դուն ես մեր խտելալը, Ո՛վ բանակում, ինչ անոյշ անուն...»

Ճ իշդ է, «Հեռու վայրերէն մենք կը հաւաքուինք» եւ ամէն մէկս «գիշեր-ցերեկ անդուլ կ'աշխատինք», որպէսզի «բանակումի պատրաստուինք»:

Երգի բառեր, որոնք բխած են բանակողներու երակներէն, կեանք տուած են իրենց երազներուն ու ապրեցուցած իրենց յիշատակները:

Ո՞ր բանակողը, ու յատկապէս Հ.Մ.Ը.Մ.-ի վրաններուն տակ, չի յիշեր իր բանակումները, անոնց լաւն ու վատը, դժուարն ու հեզասահը, հաճելին ու տհաճը ու նոյն կորովով չի պատրաստուիր յաջորդ տարի, անպայման չփախցը-

նելու իրեն ընձեռուած առիթը, կրկին միանալու իր խումբին, իր երկրորդ ընտանիքին, իր ինքնութեան:

7-14 Յուլիսին, Հ.Մ.Ը.Մ.-Ֆրանսի սկաուտները, թիւով 43, անգամուան մը համար դարձեալ հաւաքուեցան Ժամպլիլի սկաուտական բանակավայրը, միասնաբար յաջողցնելու համար սկաուտական իրենց 25րդ բանակումը:

Եօթը օրուան ընթացքին անոնք սորվեցան իրարօգնութիւն, կարգապահութիւն, հնազանդութիւն ու նաեւ՝ յարգանք դէպի տարեցը, մեծը, պատասխանատուն: Խոստացան «ընել իրենց կարելին»՝ հասնելու համար լաւին ու բարիին:

Լսեցին սկաուտական, ազգային, թէ կրօնական նիւթերու շուրջ դասախօսութիւններ, սորվեցան երգեր, կանչեր, քալեցին երկար ժամեր, խաղացին ու վայելեցին բնութիւնը:

Այդ բոլորը մարմին ստացան «Այցելութեան օր»ուան ընթացքին ներկայացուած սկաուտական արարողութեան ու

խարոյկին ընդմէջէն:

Պաշտօնական բաժինը սկսաւ սկաուտական արարողութեամբ:

Բանակումի պատասխանատու եղբ. Շանթ Ժազէրեան փոխանցեց օրուան խօսքը՝ մատնանշելով, որ Հ.Մ.Ը.Մ.-Ֆրանսի 25րդ բանակումը նուիրուած է մասնաճիւղի առաջին խմբապետ, քանի մը ամիս առաջ մեզմէ բաժնուած եղբ. Հրայր Տէր Գրիգորեանի յիշատակին: Ան շեշտեց ձեռք-ձեռքի տրուած աշխատանքը ու սերունդէ-սերունդ փոխանցուած ջահը, սկսուած երթը շարունակելու անհրաժեշտութիւնը:

Յուզիչ էր պահը, երբ գայիկ ու արծուիկները հնազանդ շարժումներով կազմեցին շրջանակը՝ Մեծ կանչը կատարելու ու «գովերգելու» Աքելյան...: Անոր հետեւեցաւ խոստման արարողութիւնը: Եւրոպայի Կաթողիկոսական Պատուիրակ ու Փարիզի Առաջնորդ Նորվան Արք. Զաքարեան, որ պատուած էր Հ.Մ.Ը.Մ.-Ֆրանսի բանակումը ու ներկայ կը գտնուէր հոն, օրհնեց

փողկապները:

Ապա խօսք տրուեցաւ Հ.Մ.Ը.Մ.-
Ֆրանսի վարչութեան ատենապետ եղբ.
Անդրանիկ Պահարեանին, որ բարի գա-
լուստ մաղթեց ներկաներուն եւ վարչու-
թեան անունով արտայայտուելու հա-
մար հրաւիրեց եղբ. Արմէն Մնացական-
եանը: Եղբայրը յուզուածով անդրադար-
ձաւ իր խմբապետին՝ եղբ. Հրայր Տէր
Գրիգորեանի անձին մեծութեան ու ան-
կէ ստացած պատգամին՝ Հ.Մ.Ը.Մ.-ը ըն-
դունիլ իբրեւ ընտանիք, վերջիշելով
անոր խօսքը՝ «բարի եկար մեր ընտանի-
քին մէջ», ու իր կարգին բոլորին մաղ-
թեց միանալ այդ սուրբ ընտանիքին ու
ծառայել անոր:

Այնուհետեւ իր գնահատականն ու
կարծիքը յայտնելու համար հրաւիրուե-
ցաւ Լիբանանէն խմբապետուհի քոյր
Սեդա Պէշլեան, որ մասնակցած էր այս
բանակումին: Քոյրը Հ.Մ.Ը.Մ.-ի Կեդրո-
նական Վարչութեան կազմակերպած
Եւրոպայի խմբապետական վերաորա-
կաւորման բանակումին (1-5 Յուլիսին
օրերուն, Ժամպլիի) մասնակցած էր իբ-
րեւ դաստիարակ:

Քոյր Պէշլեան մատնանշեց Հ.Մ.-
Ը.Մ.-ի ուժն ու գաղտնիքը, յայտնելով
թէ Հ.Մ.Ը.Մ.-ականը աշխարհի ամէն ան-
կիւն տեղ ունի, առանձին չէ: Ան արժե-
ւորելով հանդերձ հիներու ավանդը, շեշ-
տեց անհրաժեշտութիւնը անոնց աշխա-
տանքը կարենալ շարունակելու եւ
ապագայ սերունդներուն մօտ նոր
անուններ դառնալու, հետքեր ձգելու,
ջահը փոխանցելու հրամայականը:

Իր սրտի խօսքը փոխանցեց նաեւ
մասնաճիւղի խմբապետ եղբ. Պօղոս
Մահպուլեան, գնահատելով բոլոր բա-
նակողները, յատկապէս նորեկները,
որոնք սքանչելի փորձառութիւն մը ապ-
րեցան այդ քանի մը օրերու ընթացքին:
Այս առիթով, ան քոյր Կալի Գապիլեա-
նին փոխանցեց գնահատազիր մը, իբրեւ
օրինակելի արծուիկ:

Ապա, արտայայտուելու համար
հրաւիրուեցաւ Կեդրոնական Վարչու-
թեան Եւրոպայի ներկայացուցիչ եղբ.-
Հրաչ Սիսեռեան: Եղբայրը Հ.Մ.Ը.Մ.-ի
Կեդրոնական Վարչութեան անունով
շնորհաւորեց խմբապետական կազմն
ու բանակողները, իրենց սկառուսավա-
յել կեցուածքին համար եւ աւելցուց, թէ

հպարտ ենք, որ
Ժամպլիի մէջ
մեր ըսկառուե-
րը կրկին յաջողե-
ցան փոքր Հա-
յաստան մը կազ-
մել ու բարձրաց-
նել հայկական
Եռագոյնը: Եղբ
Հրաչ Սիսեռեան
նշեց, թէ
Հ.Մ.Ը.Մ.-ի Կեդ-
րոնական Վար-
չութիւնը հարս-
տութիւն կը նկա-
տէ, որ Ֆրանսայի
չըջանէն ներս գո-
յութիւն ունի
նման մասնաճիւղ
մը, որ բարելա-
ւումներ կ'արձա-
նագրէ եւ դէպի
յառաջ կ'ընթա-
նայ:

Եղբայրը եւս
յուզուածով խո-
նարհեցաւ եղբ.-
Հրայր Տէր Գրի-
գորեանի յիշատակին առջեւ, որ իր
վսեմ գաղափարին շուրջ կրցած էր հա-
մախմբել բոլորը, ու աւելցուց, թէ ան ո՛չ
միայն սկառուս էր, այլ նաեւ՝ տիպար
հայ:

Իր հայրական օրհնութիւնը փոխան-
ցելու հրաւիրուեցաւ Նորվան Արք. Զա-
քարեան: Առաջնորդ Սրբազանը սրտի
գոհունակութեամբ եւ ոգեւորութեամբ
անդրադարձաւ երգման արարողու-
թեան խորհուրդին, մատնանշելով, որ
«մեր առօրեան յուսահատական կը թը-
ւի ըլլալ, սակայն երբ կը հանդիպինք
նման պահերու, ու կը տեսնենք, որ հայ
ժողովուրդի զաւակներ հաւատքով ու
կամքով կը շարունակեն կազմակերպը-
ւիլ՝ այդ խանդավառութիւնն ու ոգեւո-
րութիւն կը ստեղծէ հոգիներէն ներս»:

Նորվան Արք. Զաքարեան մատնանը-
չեց, թէ Հ.Մ.Ը.Մ.-ի յարկին տակ փոքրի-
կը կը սորվի կարգապահութիւնն ու հնա-
զանդութիւնն, անոր հոգիին մէջ կը սեր-
մանուի ծառայութեան ոգին, որուն
շնորհիւ անձը կը յաջողի նուաճել բար-
ձունքներ ու աւելցուց, թէ մարդ էակը



որքա՛ն պէտքը ունի նմանօրինակ
դաստիարակութեան:

Նորվան Արք. Զաքարեան իր խօսքը
եզրափակեց յիշելով պատմական դէպք
մը, երբ Հայոց Կաթողիկոսի ձեռամբ,
1918ին, օրհնուած էր հայկական Եռա-
գոյնը, իսկ ինք այդ օրհնութիւնը կա-
տարեց մէջբերելով Անդրանիկ Մառուկ-
եանի «Թուղթ առ Երեւան»ի մէկ քառ-
եակը՝

«Արիւնից ծորած երիզ մը
Կարմիր,
Երկնքից պոկուած կտոր մը
Կապոյտ,
Հասուն հասկերի շող
Նարնջագոյն
Եւ վեց դարերի խաւարի վրայ՝
Դրօշ Եռագոյն...»:

Այնուհետեւ, յուշանուէր փոխան-
ցուեցաւ ողբացեալ եղբ. Հրայր Տէր
Գրիգորեանի զաւկին՝ Բաբգէն Տէր
Գրիգորեանին, որ յատկապէս այս առի-
թով եկած էր Միացեալ Նահանգներէն
ու միացած էր իր նախկին եղբայրնե-
րուն:



«Հ.Մ.Ը.Մ-ի հետ, Հ.Մ.Ը.Մ-ի համար» նշանաբանը որդեգրած Հ.Մ.Ը.Մ.-Ֆրանսի սկաուտական 25րդ բանակումին պաշտօնական արարողութեան բաժինը կ'աւարտէր, սակայն՝ ո՛չ օրը:

Ծնողները վարչութեան մատուցած համադրամ ճաշերը վաճելիէ էտք, այս անգամ կը հրաւիրուէին բանակավայրի միւս բաժինը, ուր խարոյկի պատրաստութիւնները տեսնուած էին:

Ձահը կը հրավառէր կրակը: Եւ արդէն շարունակութիւնը օտար չէ սկաուտներուն: Երգ, խաղ, կատակ-խաղ, կանչ, զաւեշտ իրարու կը յաջորդէին: Բոլոր բանակողները մասնակից էին խարոյկի ընթացքին, նոյնիսկ ծնողները, որոնք արդէն վարժուած են սկաուտական կեանքին:



Այս տարուան բանակումը, ըլլալով, մասնաճիւղին 25րդ բանակումը, ունէր այլ իւրայատկութիւն մը եւս: Վարչու-

թիւնը բաց կող ուղղած էր Հ.Մ.Ը.Մ.- Ֆրանսի շարքերէն անցած նախկին սկաուտ-արեւոյշներուն, այդ օր միանալու իրենց եւ վերապրելու հին օրերը: Եւ անշուշտ նախաձեռնութիւնը յաջող էր եւ պատասխանները՝ մեծ թիւով:

Օրուան ընթացքին խմբային խաղեր «նոր»երու եւ «հին»երու միջեւ, խմբանկարներ, խարոյկի մասնակցութիւն, այլ խանդավառութիւն սփռեցին մթնոլորտին: Ու «նորեկներ»էն «նախկիններուն» մեկնուած ձեռքը բռնողները եւս զգացին պատգամին ուժը:


The Champs Élysées just steps away and the Parc Monceau nearby

HOTEL



PAVILLON MONCEAU
PARIS

Full of charme,
Tastefully decorated 36 rooms
and 6 suites with individual
heating/air conditioning,
direct access telephone line,
internet connection, minibar,
safety box and satellite TV.
Private bathroom with hairdryer.
The suites can accommodate
3 adults or a family
with parents and 2 children.



43 rue Jouffroy d'Abbans 75017 Paris
Tel 331 56 79 25 00 - Fax 331 42 12 99 38

infos@pavillon-monceau.com
www.pavillon-monceau.com

Studio VICKER 2005-2006



130 ՀԱՉԱՐ ՏՈՒԱՐԻ ՀԱՆԳԱՆԱԿՈՒԹԻՒՆ՝ Ի ՆՊԱՍՏ Հ.Մ.Ը.Մ.Ի «ԱՋԱՏԱՄԱՐՏ» ՄԱՍՆԱԾԻԴԻ ՍԵՓԱԿԱՆ ՄԱՐԶԱԴԱՇՏԻՆ

Գեորգ Պետրկեան ՓԱՍՏԻՆԱ

Ազգային մեր կեանքէն եւ յատկապէս միութեանական ծիրէն ներս, չկայ այնքան աւելի մեծ հպարտանք, ուրախութիւն եւ ցնծութիւն, որքան նոյն այդ միութեան իրերայաջորդ վարչութիւններու տարիներու երազին իրականացումը:

Այսպէս, քանի մը ամիս առաջ, Փաստինայի Հ.Յ.Դ. «Լեւոնավայր» կոմիտէին նախաձեռնութեամբ եւ իր հովանին վայելող ուղեկից միութիւններուն գործակցութեամբ, Փաստինայի հայ գաղութը ահանատեսը եղաւ այս ճշմարտութեան, երբ տէրը դարձաւ նոր Հայ Կեդրոնի մը:

Այս ահումբէն ներս կոմիտէի, ՀՕՄ-ի, ՀԵԴ-ի եւ Հայ Տարեցիներու Միութեան կողքին, Հ.Մ.Ը.Մ-ի «Ազատամարտ» մասնաճիւղն ալ պիտի ունենար իր կարիքները գոհացնող զբաղակցականներ եւ յատկապէս փոքրերու մարզադաշտ:

Մէկ խօսքով, հայու ոգիէն ու յատկապէս դրական անհրաժեշտութենէն մեկնած, այս նոր սեփականութեամբ Փաստինայի հայ իրականութեան մէջ նոր էջ մը բացուեցաւ:

Ինչ կը վերաբերի Հ.Մ.Ը.Մ-ի «Ազատամարտ» մասնաճիւղին, շրջանին մէջ սեփական մարզադաշտ ունենալ կը նըշանակէր մեծ «խապրիկ», որ իր բոլոր անդամներուն եւ համակիրներուն կ'աւետէր տասնամեակներ առաջ ծնունդ առած երազին իրականացումը:

Այս մէկը եթէ խօսուեն արտայայտութիւն է, որ մասնաճիւղը կենսունակ է, ժիր եւ գործունեայ, ապա նաեւ այս նախաձեռնութիւնը պերճախօս փաստ է



մասնաճիւղի անդամներու գիտակցութեան, որոնք պատրաստ են յանձն առնելու բոլոր տեսակի գոհողութիւններ:

Նոր եւ սեփական մարզադաշտի մը տէր դառնալը ճշմարիտ իրականութիւն է եւ միաժամանակ նշան, թէ շրջանէն ներս գաղութի ուժերու կազմակերպութեան կայ, նոր ընթացք եւ աշխուժութիւն կայ ու մասնաւանդ՝ փայլուն ապագայի նկատմամբ մեծ հաւատք կայ, ինչ որ վճռակամութեամբ պարտւում է:

Ու անկասկած, որ այս օրերուն, ինծի նման հաւանաբար շատեր, այս նոր Հայ Կեդրոնի յաճախակի կամ պատահական իրենց այցելութիւններով ահանատես եղած էին կամաւոր միութեանականներու եւ ընկերներու այն բանակին, որ կեդրոնի բանալիներուն ստանձնումէն անմիջապէս ետք, արդէն զայն մեղուի փեթակի վերածած՝ գիշերը ցերեկին խառնելով, անսահման եւ օրինակելի նուիրումով այս կարուածին վերանորոգման գանազան աշխատանքներուն նուիրում էր:

Մէկ խօսքով՝ կեդրոնաշինութեան մը սրբազան նախաձեռնութեան, որ անշուշտ հարազատ ծնունդն է այս «բանակի» անդամներուն հայու շինարար, պատրաստակամ, նուիրեալ, գոհաբերող, մաքուր եւ ազգային նկարագրին:

Իր կարգին, շրջանի Հ.Մ.Ը.Մ-ի «Ազատամարտ» մասնաճիւղն ալ իր կամաւորներով օր առաջ սկսած է ճգնիլ, վերանորոգելու եւ արդիականացնելու համար կեդրոնէն ներս գտնուող մարզադաշտը, որպէսզի փոքր տարիքի իր մարզիկ-մարզիկուհիները կարենան շուտով իրենց մարզական փորձերը կատարել իրենց պատկանած միութեան հարազատ ու սեփական դաշտին վրայ:

Այս մեծածախս ծրագրին իրականացման համար, Հ.Մ.Ը.Մ-ի «Ազատամարտ» մասնաճիւղին վարչութիւնը քանի մը ամիս առաջ կեանքի կոչած էր յատուկ յանձնախումբ մը, որուն գլխաւոր նպատակը պիտի ըլլար կազմակերպել



դրամահալար-պարահանդէս մը, ապահովելու համար որոշ նիւթական՝ ի խնդիր մարգարաշտի վերաշինութեան եւ վերանորոգման աշխատանքներուն:

Շաբաթ, 30 Մայիս 2009ին, երեկոյեան ժամը 8էն սկսեալ, Փասատինայի (այս պարագային) նախկին Հայ Կեդրոնի աւելի գեղեցկացած ու զարդարուած սրահին մէջ, հովանաւորութեամբ Հ.Մ.Ը.Մ.ի Փասատինայի «Ազատամարտ» մասնաճիւղի վարչութեան եւ կազմակերպութեամբ դրամահալարի յանձնախումբին, տեղի ունեցաւ այս յատուկ պարահանդէսը:

Ձեռնարկին, շրջանի Ս. Սարգիս եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Խորէն Պապօշեանի, Հ.Յ.Դ. «Լեռնավայր» կոմիտէի ներկայացուցիչ Անդօ Շանլեանի, Հ.Մ.Ը.Մ.ի Արեւմտեան Մ. Նահանգներու Շրջանային Վարչութեան ներկայացուցիչ եղբ. Սթիւ Արթինեանի եւ Հ.Մ.Ը.Մ.ի «Ազատամարտ» մասնաճիւղի վարչութեան ատենապետ եղբ. Սարգիս Կարապետեանի եւ իր գործակիցներուն կողքին ներկայ էին նաեւ Փասատինայի քոյր միութիւններու ներկայացուցիչներ, Հ.Մ.Ը.Մ.ականներ, միութեան բարերարներ, տարիներու բարեկամներ, համակիրներ, հին ու նոր հովանաւորներ, հիւրեր եւ անդամներ, թիւով աւելի քան 350 հոգի:

Հոգեւոր հովիւին սեղաններու օրհնութեանէն ետք, գործադրուեցաւ կոկիկ ու կարճ յայտագիր մը, որուն սկիզբը օրուան հանդիսավարուհի քոյր Սիրան Մարսէլեան բացման իր խօսքին մէջ շնորհակալութիւն եւ երախտագիտութիւն յայտնեց ներկաներուն եւ ապա անդրադարձաւ երեկոյի կազմակերպիչ յանձնախումբին կատարած մեծ աշխատանքներուն:

«25 տարիներ առաջ, - շարունակեց հանդիսավարը, - երբ «Ազատամարտ» մասնաճիւղի ընդհանուր ժողովին փոխանցադիրս կը ներկայացնէի, արդէն օրակարգի վրայ էր սեփական մարզադաշտի մը տէրը դառնալու առաջարկը: Այսօր հրապարակաւ շնորհակալութիւն կը յայտնեմ շրջանի Հ.Յ.Դ. «Լեռնավայր» կոմիտէութեան, որ առիթ ընծայեց սեփական նոր Հայ Կեդրոնէն ներս ունենալու Հ.Մ.Ը.Մ.ի մարգարաշտը: Առաջին քայլերը առնուած են: Կը մնայ



շարունակել աշխատանքը»:

Ապա, երկրի տնտեսական տագնապներուն անդրադառնալով, քոյրը պարզեց նման կալուածի մը տէրը դառնալու հրամայականը, ի խնդիր նոր սերունդի հայապահպանման մեր ճիգերուն:

Իր խօսքին աւարտին, քոյր Մարսէլեան կրկին անգամ շնորհակալութիւն յայտնեց ետք բոլոր նուիրատուներուն եւ զօրակցողներուն, մէջբերում մը կատարեց Հրայր Մարուխեանի Հ.Մ.Ը.Մ.ի մասին կատարած հրապարակային մէկ յայտարարութեանէն, կարգալով. «Այն բոլոր պատանիներն ու երիտասարդները, որոնք ապագային քաղաքական յանձնառութեան տակ կը մտնեն, Հ.Մ.Ը.Մ.ի շարքերուն մէջ է, որ կը ստանան իրենց ազգային հիմնական դաստիարակութիւնը»:

Իր կարգին, մասնաճիւղի վարչութեան ատենապետ եղբ. Սարգիս Կարապետեան իր խօսքին մէջ շեշտեց, թէ 32 տարուան կեանք ունի այս մասնաճիւղը, որուն գլխաւոր երազը եղած է սեփական մարգարաշտ մը ունենալ:

Ապա, ան շնորհաւորեց Հ.Մ.Ը.Մ.ն ու Հ.Մ.Ը.Մ.ականները իրենց սեփական նոր կալուածին համար եւ երախտագիտութեամբ արտայայտուեցաւ Հ.Յ.Դ. «Լեռնավայր» կոմիտէութեան, միութեան անդամ-անդամուհիներուն եւ համակիրներու ճիգերուն եւ այս գեղեցիկ ու մեծ երազը իրականութիւն

դարձնող բարերարներուն՝ իրենց նիւթաբարոյական աջակցութեան համար:

«Այս նոր Հայ Կեդրոնը համալիր մըն է, - շարունակեց ատենապետ եղբ. Կարապետեան, - ուր իրարու քով եւ իրարու հետ մէկ յարկի տակ պիտի գործեն ուղեկից միութիւններ: Մեր այս նոր կալուածը բերդ մըն է, որ կոչուած է պաշտպանելու մեր նոր սերունդի զաւակները՝ ապահովելու համար անոնց անվտանգութիւնը»:

Եղբ. Կարապետեան անդրադարձաւ նաեւ նոր կեդրոնին եւ յատկապէս անոր մարգարաշտին կարեւորութեան եւ ապագայի հաշտոյն կատարած եւ կատարելիք դերակատարութեան:

«Այս երազին իրականացումը նուիրական գործ մըն է, որովհետեւ այս աշխատանքով եւ այս նոր իրականութեամբ կը վերանորոգենք մեր ազգային ուխտը: Այսօր, ձեռով մը հիմնաքարը կը դնենք հայապահպանման եւ հայակերտումի ամրոցի մը, ուր պիտի պահուի հայու դիմագիծը: Այս երեկոյ դուք եկած էք ըսելու, որ յանուն մեր ապագային պատրաստ էք մեր սրբազան հաւաքական աշխատանքը տանելու, որուն համար մենք միշտ երախտապարտ պիտի մնանք»:

Եղբ. Կարապետեան նաեւ յատուկ



Հ.Մ.Ը.Մ.Ի ՊՈՒՐՆ ՀԱՄՈՒՏԻ ՊԱՍՔԵԹՊՈՒԻ ԱՂՋԿԱՆՑ ԽՈՒՄԲԸ ԿԸ ԲԱՐՁՐԱՆԱՅ Ա. ԴԱՍԱԿԱՐԳ

Թղթակից ՊՈՒՐՆ ՀԱՄՈՒՏ

Պուրն Համուտի աղջկանց խումբը այս տարեշրջանին յաջողեցավ ինքզինք պարտադրել իր մրցակիցներուն եւ փաստել, որ ինք կը մնայ Բ. դասակարգի լաւագոյն կազմը:

Շաբաթ, 23 Մայիսին, Սաժէսի Ժըտէյոէի դահլիճին վրայ տեղի ունեցաւ Լիբանանի պասքեթբոլի Բ. դասակարգի աղջկանց ախոյեանութեան աւարտական հանգրուանի վերջին մրցումը՝ Հ.Մ.Ը.Մ.ի Պուրն Համուտի եւ «Անդրանիկ»ի Սին էլ Ֆիլի խումբերուն միջեւ:

Հ.Մ.Ը.Մ.ի Պուրն Համուտի աղջկանց կազմը, որ իր առաջին մրցումին 62-46 արդիւնքով յաղթանակ մը արձանագրած էր, երկրորդ յաղթանակ մը արձանագրելով՝ 2-0 արդիւնքով գերազանցեց իր մրցակիցը եւ Բ. դասակարգի ախոյեան հանդիսանալով բարձրացաւ Ա. դասակարգ:

Բաւական հետաքրքրական եւ տաք ճակատումէ մը ետք, Հ.Մ.Ը.Մ.ի աղջիկները քիչ մը դժուար, բայց կարեւոր յաղթանակ մը արձանագրեցին՝ 60-58 արդիւնքով:

Ա. կիսախաղին «Անդրանիկ» եղաւ տիրապետողը, իսկ Բ. կիսախաղին՝ Հ.Մ.Ը.Մ.։ Մրցումին չորս քառորդները ընթացան հետեւեալ ձևով. 16-21, 6-18, 20-10 եւ 18-9: Հ.Մ.Ը.Մ.էն 14ական կէտ նշանակեցին Ռաշատ Խըլուժ եւ Լուպնա Ապտալա:

Հ.Մ.Ը.Մ.ի աղջիկները յաջողեցան բաւական տպաւորիչ մրցում մը կատարել եւ խմբային պայքար մղել, իրենց կողքին ունենալով խումբին համակիրները:

Անցեալ տարեշրջանին երրորդ հանդիսացած Հ.Մ.Ը.Մ.ի





ՎԿԱՅԵԱԿ ԿԱՐԳԻ ՏՈՒՉՈՒԹԻՒՆ ԵՒ ՄԿԱՈՒՏԱԿԱՆ ԿԱՅՔ ԷԶՐԻ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Թղթակից
ՊՈՒՐԳ ՀԱՄՈՒՏ



Կիրակի, 31 Մայիս 2009ին, Ազգ. Լեւոն եւ Սոֆիա Յակոբեան Գոլէճի դաշտին վրայ տեղի ունեցաւ Հ.Մ.Ը.Մ-ի Վկայեակ կարգի տուչութիւն, ներկայութեամբ Լիբանանի Շրջանային Սկաուտ. Խորհուրդի եւ խմբապետական կազմի ներկայացուցիչներուն: Այս առիթով Լիբանանի տարբեր մասնաճիւղերէն 16 խմբապետներ ստացան Վկայեակ կարգ: Արարողութեան ընթացքին տեղի ունեցաւ նաեւ համացանցի սկաուտական կայքէջի բացման հանդիսութիւն, որ առիթ մը եղաւ ներկաներուն ծանօթացնելու նորաստեղծ կայքէջը եւ այդ ուղղութեամբ տարուած աշխատանքները: Հ.Մ.Ը.Մ-ի Լիբանանի սկաուտական կայքէջի պաշտօնական հասցէն է՝ www.HomenetmenLebanon.com

ՇՐՋԱՆԱՅԻՆ ԽՄԲԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՎԿԱՅԵԱԿ ԿԱՐԳԻ ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թղթակից
ՊՈՒՐԳ ՀԱՄՈՒՏ

Լիբանանի Շրջանային խմբապետութեան կազմակերպութեամբ, Շաբաթ, 2 եւ Կիրակի, 3 Մայիս 2009ին, Աժալթունի մէջ տեղի ունեցաւ Վկայեակ կարգի գործնական աշխատանք, որուն մասնակիցները գործադրեցին Այնճարի երէց եւ պարմանուհի փաղանգներուն նախապատրաստական դասընթացը:

Աշխատանքին մասնակիցները կատարեցին երկօրեայ արշաւ-բանակում, որուն ընթացքին անոնց փոխանցուեցան սկաուտական գործնական գիտելիքներ, իսկ Շաբաթ երեկոյեան տեղի ունեցաւ խարուկահանդէս:



ՎԿԱՅԵԱԿ ԿԱՐԳԻ ԴԱՍԱԽՈՍՈՒԹԻՒՆ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԵՍՊԱՆԱՏԱՆ ՄԷՋ

Լիբանանի Շրջանային Սկաուտ. Խորհուրդին կազմակերպութեամբ, 22 Ապրիլ 2009ի երեկոյեան ժամը 8ին, Հայաստանի դեսպանատան մէջ տեղի ունեցաւ Հ.Մ.Ը.Մ-ի Վկայեակ կարգի դասախօսութիւններու շարքին «Միջազգային կառուցները եւ Հայաստանի դերը» նիւթին ներկայացումը, մասնակցութեամբ Հ.Մ.Ը.Մ-ի խմբապետական կազմէն դասընթացքին հետեւողներուն:



Օրուան դասախօսն էր Լիբանանի մէջ Հայաստանի դեսպանատան ժամանակաւոր հաւատարմատար Ռուբէն Խարազեան, որ միջազգային կառուցներու մասին ամփոփ զեկուցում մը տալէ ետք, անդրադարձաւ Հայաստանի արտաքին քաղաքականութեան, դիմադրուած մարտահրաւէրներուն եւ խնդիրներուն:

Դասախօսութենէն ետք սկաուտները հարցումներու ընդմէջէն տեղեկութիւններ ստացան Հայաստանի արտաքին քաղաքականութեան մասին:

ՀԱՆԴԻՊՈՒՄ ԼԻՔԱՆԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴԻՆ ՀԵՏ

**Թղթակից
ՊԵՅՐՈՒԹ**

Լիբանանի Հայոց Թեմի Առաջնորդ Գեղամ Եպս. Խաչերեանի հրահանգով ընդառաջելով, Կիրակի, 10 Մայիս 2009ին, Պէջրութի Ս. Նշան Մայր եկեղեցւոյ մէջ, Առաջնորդին ճաշի հիւրը եղան Հ.Մ.Ը.Մ.ի Շրջանային Վարչու-

թեան, Շրջանային Սկաուտ-Խորհուրդի, Շրջանային խմբապետական կազմի, Հ.Մ.Ը.Մ.ի Պէջրութի, Պուրճ Համուտի, Ժըտէյտիի, Անթիլ-Խասի, ինչպէս նաեւ շեփորախումբի խմբապետական կազմերու 54 անդամներէն բաղկացած պատուիրակութիւն մը:

Լիբանանի Շրջանային Վարչութեան անունով հանդիպումին բացման խօսքը արտասանեց ատենապետ եղբ. Մոսիկ Պարսումեան, որ շնորհակալութիւն յայտնեց Առաջնորդին՝ Հ.Մ.Ը.Մ.ի մեծ ընտանիքին ունեցած իր մեծ ներդրումին համար: Եղբ. Պարսումեան ըսաւ,



որ Հ.Մ.Ը.Մ.ը հաւատարիմ է իր առաքելութեան եւ Հ.Մ.Ը.Մ.ականները հաւաքաբար պիտի շարունակեն իրենց վստահած պարտականութիւնները:

Առաջնորդ Գեղամ Եպս. Խաչերեան զրոյց մը ունեցաւ Հ.Մ.Ը.Մ.ի պատասխանատուներուն հետ, ապա ան գնահատեց միութեան ներդրումն ու դերը ընկերութեան մէջ: Լիբանանի Հայոց Թեմի Առաջնորդը շնչեց, որ Հ.Մ.Ը.Մ.ը իր կարգապահութեամբ ու կազմակերպւածութեամբ հայութեան տուած է յաղթանակի ոգի եւ պարծանք:

Ճաշի աւարտին, Շրջանային ըՄ-կառու. Խորհուրդի ատենապետ քոյր Արաքս Գուլաճեան Առաջնորդ Սրբազանին յանձնեց յուշանուէր-գիրքեր:



ՀԱՄԱՅԱՆՅԻ ՄԿԱՌԻՏԱԿԱՆ ԿԱՅՔԷՉԵՐՈՒ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐՈՒ ՀԱՆԴԻՊՈՒՄ-ՍԵՄԻՆԱՐ

**Թղթակից
ՊՈՒՐՑ ՀԱՍՈՒՏ**

Շաբաթ, 30 եւ Կիրակի, 31 Մայիս 2009ին, կազմակերպութեամբ Լիբանանի սկաուտական Ֆետերասիոնին, մարտի սկաուտներու կեդրոնատեղիին մէջ տեղի ունեցաւ լիբանանեան սկաուտական կայքէջերու պատասխանատուներու առաջին հանդիպում-սեմինարը, որուն Հ.Մ.Ը.Մ.ի Շրջանային խմբապետու-



թիւնը ներկայացուց եղբ. Շանթ Տէմիրճեան: Սեմինարին ընթացքին քննութեան առարկայ դարձան սկաուտական կայքէջերու կարեւորութիւնն ու պատրաստութեան եղանակը, կայքէջերուն միջեւ գործակցութեան կարեւորութիւնը եւ ե-լրագրութեան օգտագործումը՝ իբրեւ քարոզչական արդի միջոցառում:



ՇՐՋԱՆԱՅԻՆ ԽՄԲԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԱՐԵՆՈՅՇ ՃԻՒՂԻ ՄԱՍՆԱՃԻՂԱՅԻՆ ՄԻԱՅԵԱԿ ՅԱՅՏԱԳԻՐ. ՄԱՔՐՈՒԹԵԱՆ ԱՐՇԱՔ

Թղթակից ՊՈՒՐԾ ՅԱՍՈՒՏ

Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի Շրջանային խմբապետութեան արենոյշ ճիւղի միջ-մասնաճիւղային մաքրութեան արշաւը տեղի ունեցաւ Կիրակի, 3 Մայիս 2009ին, առաւօտեան ժամը 10էն սկսեալ: Գործունէութեան իրենց աջակցութիւնն ու օժանդակութիւնը բերին Պուրճ Համուտի եւ Զալքայի քաղաքապետներ՝ Անդրանիկ Մսրրլեան եւ Միշէլ Ասաֆ Մըր:

Հ.Մ.Ը.Մ.ի Պէյրութի, Պուրճ Համուտի, Ժըտէյտէի եւ Անթիլիասի մասնաճիւղերէն արենոյշներ Պուրճ Համուտի, Ամանոսի, Զալքայի շրջաններուն մէջ կատարեցին

մաքրութեան արշաւ, միաժամանակ հանրութեան ցրուեցին թղթիկներ, որոնց վրայ արձանագրուած էր՝ «Մաքուր պահենք մեր շրջապատը»: Նոյն օրը մաքրութեան աշխատանք կատարուեցաւ նաեւ Այնճարի մէջ, Հ.Մ.Ը.Մ.ի տեղւոյն մասնաճիւղի արենոյշներուն կողմէ:

Կէսօրին, խումբերը հաւաքուեցան Անթիլիասի «Հ.Մ.Ը.Մ. - Աղբալեան» մարզամշակութային կեդրոն, ուր ճաշեցին, ապա անցան յայտագիրի երկրորդ բաժինին գործադրութեան՝ մարզական խաղերու կիրարկման: Յայտագիրը վերջ գտաւ կէսօրէ ետք ժամը 3ին:

Այս գործունէութեան նպատակն էր հանրութեան փոխանցել պատգամ մը. մաքուր պահել իրենց շրջապատը՝ իրենց առողջութեան համար:



Hratch and Neshan Boyadjian

Tel.: + 961-1-249554 Cell : + 961-3-882812/ + 961-3-882811
Fax: +961-1-248556 Bourj Hammoud - Beirut - Lebanon
Sector 4. 98th st. Bldg. #246 GF

E-mail: Hratch@goldenmountains.com Hratchboy@hotmail.com

<http://www.goldenmountains.com>



ՅԱԶՈՐԴԱԲԱՐ ԵՐՐՈՐԴ ՏԱՐԻՆ ԸԼԼԱԼՈՎ՝

Հ.Մ.Ը.Մ.Ի ՊԱՍՔԵԹՊՈՒԻ ԱՂԶԿԱՆՑ ԽՈՒՄԲԸ ԿԸ ՀԱՆԴԻՍԱՆԱՅ ՍՈՒՐԻՈՅ ԵՐԿՐՈՐԴ

**Րաֆֆի Սիլահեան
ՀԱԼԵՊ**

Սուրիոյ պասքեթպոլի աղջկանց ակոյեանութեան, Հ.Մ.Ը.Մ.ի ներկայացուցչական կազմը յաջորդաբար երրորդ տարին ըլլալով գրաւեց ակոյեանութեան երկրորդ դիրքը: Առաջին հանգրուանի մրցումներուն Հ.Մ.Ը.Մ.ի աղջիկները սուր մրցակցութիւն ունեցան Սուրիոյ յաւաքոյն խումբերէն ճալաայի, Իթթիհատի, Հուրիէի հետ եւ յաջողութիւն արձանագրեցին Հալէպէն դուրս կատարուած բոլոր մրցումներուն, գրաւելով առաջին հանգրուանի երկրորդ դիրքը:

Աւարտական քառեակի հանգրուան անցնելով, խումբը իրեն մրցակից ունեցաւ Հալէպի Հուրիէ խումբը, որուն

հետ կատարեց երեք մրցումներ, որոնցմէ երկուքը յաղթելով՝ ճալաայի ընկերակցելով հասաւ աւարտական մրցում: Հ.Մ.Ը.Մ.ի աղջիկները 58-48 արդիւնքով անակնկալ պարտութիւն մը կրեցին ճալաայի կազմէն: Մրցումին առաջին կիսախաղին անոնք բարձրորակ խաղարկութեամբ յաջողեցան պարտադրել իրենք զիրենք՝ շնորհիւ խմբապետուհի Մարիայի, Դալարի, Թինայի եւ Մեղրիկի յարձակումներուն, որոնք յաջողութեամբ գործադրեցին մարզիչ Մանօ Հալլաճեանի ցուցմունքները, եւ կիսախաղը յաղթական աւարտեցին 25-24 արդիւնքով: Երկրորդ կիսախաղին, մրցակիցը բարեկանց իր խաղարկութիւնը եւ յաջողեցաւ Հ.Մ.Ը.Մ.ի աղջիկներուն հետ փոխն ի փոխ ձեռք ձգել յաղթական արդիւնքը, մինչեւ աւարտէն մէկ ու կէս վայրկեան առաջ, երբ ճալաայի մարզիկները յաջողեցան մըր-

ցումը յաղթական աւարտել՝ 48-58 արդիւնքով: Աւարտին, Հ.Մ.Ը.Մ.ի աղջկանց խումբի խմբապետուհի քոյր Մարիա Գրիգորեան ստանձնեց Սուրիոյ երկրորդութեան բաժակը՝ Հալէպի Փետերասիոնի անդամ Ամմար Իզմիրլիի ձեռամբ:

2008-2009 տարեշրջանի Հ.Մ.Ը.Մ.ի աղջկանց խումբը բաղկացաւ հետեւեալներէն՝ մարզիչ Մանօ Հալլաճեան, պատասխանատուներ եղբ. Ճորճ Գրատեան եւ քոյր Անժէլ Գրատեան, վարչութեան ներկայացուցիչ եղբ. Յարութ Չամիչեան, խաղացողներ խմբապետուհի Մարիա Գրիգորեան, Դալար Արապաթեան, Թինա Գազանճեան, Մեղրիկ Եագուպեան, Ալիսիա Մակարեան, Նուշիկ Մակարեան, Մեղրիկ Գրիգորեան, Դալար Կրպոյեան, Թամարա Էլիաս եւ Քառուար Իպրահիմ:



Հ.Մ.Ը.Մ. Ի ԱՄԵՐԻՔԱՆԸ ՏՈՂԱՆՑՔ ԳԱՄԻՇԼԻԻ ՄԷՋ

Անդրանիկ Սարգիսեան ԳԱՄԻՇԼԻ

Կիրակի, 12 Ապրիլ 2009ին, Հ.Մ.Ը.Մ.ի Գամիշլիի մասնաճիւղը կազմակերպեց աւանդական իր շքեղ տողանցքը, որ նոր կրողով տուաւ գամիշլիահայրենեան, գօտեպնդեց անոր յոյսը եւ զօրացուց անոր կապն ու հաւատքը ալե-

հեր, բայց մշտանորոգ այս միութեան հանդէպ:

Աւանդական տողանցքը անգամ մը եւս միաձուլեց համակիրներն ու անդամները, ծնողներն ու զաւակները, հիւներն ու նորերը ու տողանցող քոյր-եղբայրները:

Տողանցքը ստեղծեց բնութեան ու ազգային մաքրամաքուր գոյներով յղացած, գեղեցիկ ու հմայիչ ծաղկեփունջ մը, որուն սփռած հայկականութիւնն

ու բուրմուռները շատ հեռուէն կը զգացուէին:

Տողանցքին հաւաքը սկսաւ առաւօտեան կանուխ: Սկառուտական բաժանմունքները խումբ առ խումբ մուտք գործեցին Հ.Մ.Ը.Մ.ի ակումբին լայնատարած շրջափակը եւ ողողեցին զայն: Քիչ յետոյ կային բոլորը, գայլիկ-արծաիկները, արի-արեւոյշները, շեփորախումբն ու վարչութեան եւ Սկառուտաւորհուրդի միատեսակ տարագով քոյր-եղբայրները:

Բոլորը... ամբողջ Հ.Մ.Ը.Մ.ը:

Երէց Հ.Մ.Ը.Մ.ականներու մասնակցութիւնը, գեղեցիկ լրջութիւն ու պատկառանք մը կը սփռէր օրուան տողանցքին վրայ:

Տողանցքը ընթացք առաւ Հ.Մ.Ը.Մ.ի ակումբին շրջափակէն ու անցաւ հայահոծ թաղամասերէն ու փողոցներէն: Այցելեց հայ կաթողիկէ համայնքի Առաջնորդարան եւ Ս. Յովսէփ եկեղեցի, ուր լաւագոյն ձեւով դիմաւորուեցաւ ներկայ ժողովուրդին կողմէ: Իսկ շեփորախումբին նուագակցութիւնը խանդավառութեան մեծ ալիք մը բարձրացուց:

Կարճատեւ դադարէ մը ետք, տողանցքը ուղղուեցաւ Ազգային Առաջնորդարան եւ անոր կից գտնուող Ս. Յակոբ եկեղեցին: Եկեղեցին ու անոր յարակից փողոցները ողողած հոծ բազմութիւնը խանդավառուած երեւոյթէն՝ ծափողջոյններով դիմաւորեց օրուան



Տողանցք՝ Գամիշլիի հայահոծ թաղերէն ներս:

տողանցքին մասնակիցները:

Այո, կրկին տողանցեց Հ.Մ.Ը.Մ-ը ու իր տենդով ու տենչով ջերմացուց խուռներամ բազմութեան սրտերն ու հոգիները: Իր գեղեցիկ, կարգապահ ու հնազանդ շարքերով ան հմայեց ու խանդավառեց հայ գաղութը: Տողանցքին ընթացքին ձիւնագունդի նման ուռճացան եւ շատցան սկառտներու հետեւողներուն շարքերը, իսկ Հ.Մ.Ը.Մ. տողանցեց հպարտօրէն եւ բոլորին տարաւ հո՛ն, ուր տիրական էին խանդաղատանքի, հպարտութեան, ներշնչանքի ու յոյսի գգացումները:

Հայ մայրերը չկրցան թաքցնել իրենց մայրական գեղեցիկ գգացումները եւ վերադարձան հայկական վաղեմի աւանդութեան, առատութիւն ցանկալու իբրեւ նշան՝ բրինձ եւ շաքար ցանեցին տողանցող քոյր-եղբայրներուն վրայ:

Գեղեցիկ այս տողանցքին, Հ.Մ.Ը.Մ. անգամ մը եւս ապացուցեց, որ ինք հաւատարիմ է իր «Բարձրացիր-բարձրացուր» նշանաբանին, եւ ունի հաւատքը, կամքն ու ներուժը, ինչպէս նաեւ միութենական գործունէութեան տարածադաշտը, նորահաս սերունդները ներգր-



Հ.Մ.Ը.Մ.ի Գամիշլիի մասնաճիւղի վարչութիւնը եւ Սկաւտ. Խորհուրդը Սիփան Վրդ. Քէչեճեանի այցելութեան ժամանակ:

րակելու եւ իր բազինին առջեւ թրծելու, հայեցի դաստիարակութեամբ օժտելու, եւ իբրեւ յոյսի ու յարատեւութեան երաշխիք՝ իր ժողովուրդին հրամցնելու ունակութիւնը:

Թող շարունակուի հայանուէր վերելքը, Հաստակամ քայլերով ու աննահանջ կամքով:

Վարձքդ կատար Հ.Մ.Ը.Մ.:

Հ.Մ.Ը.Մ.Ի ՀԱՎԵՊԻ ՄԱՍՆԱԾԻՂԻՆ ՄԿԱՌԻՏԱԿԱՆ ՀԱՃԵԼԻ ԱՌՕՐԵԱՆ

Ֆլորա Փոստալեան ՀԱԼԷՊ

Հ.Մ.Ը.Մ.ի Հայկալի մասնաճիւղի «Շաւարշ Քրիսեան» եւ «Գրիգոր Յակոբեան» գայլիկ եւ արծաթիկ միաւորներու խմբապետական կազմերը 14 Յունիս 2009ին կատարեցին միօրեայ արշաւ մը դէպի Եւֆրատալիէի Ս. Աննա եւ Ժտէտիէի վանքերը: Անդամները առաւօտեան հաւաքուեցան «Արամ Մանուկեան» Ժողովրդրդային Տուն, միշտ պատրաստ վիճակի մէջ ընդունելու բոլոր հրահանգները եւ մեկնելու դէպի որոշուած վայրը:

Քանի մը ժամ ետք անոնք հասան Ժտէտիէի վանքը, ուր ծանօթանալէ ետք վայրին, կատարուեցաւ խմբակային դրութիւն, եւ խմբակները կրեցին Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադիրներուն անունները: Գործունէութիւնը սկսաւ «Յառաջ նահատակ» քայլերգով, որուն յաջորդեց նախաճաշը, ապա՝ սկառտական մարզանքները: Այնուհետեւ, դասախօսական հաճելի շարք՝ պատմութի եւ ֆուլթպոլի մասին: Դասախօսութիւններէն ետք

տեղի ունեցաւ զարգացման մրցում: Օրուան ճաշը պատրաստուեցաւ պատասխանատուներուն կողմէ: Ս. Աննա վանքի շրջափակը մեկնելով, անդամները հնարեցին յատուկ կանչեր: Կատարեցին ուալի, ջրային խաղեր, խրախճանք եւ իրենց գործունէութիւնը փակեցին Ս. Աննա եկեղեցի այցելութեամբ:

Նոյնը օրը, «Գ. Յակոբեան» գայլիկ միաւորի ճերմակ վոհմակը կատարեց միօրեայ խաղի գործունէութիւն Հ.Մ.Ը.Մ.ի մարզականէն ներս: Վոհմակի եղբայրները հաճելի ժամեր անցընելով, կատարեցին սկառտական զանազան խաղեր: Գործունէութեան ամէնէն ճոխ վայրկեանները եղան դաշտային շուրջով խաղերը եւ գայլիկական ձեռային աշխատանքներու պատրաստութիւնը:

Իսկապէս գայլիկներուն համար այդ օրը անմոռանալի եղաւ: Կ'ըսեն, թէ ամէն ինչ իր վերջը ունի, բայց ո՛չ այնքան ատեն, որ Հ.Մ.Ը.Մ.ը գոյութիւն ունի, այնքան ատեն, որ այս մեծ ընտանիքը իր թեւերը լայն բացած՝ կ'ընդունի մանուկները:



ԳԱՅԼԻԿ-ԱՐԾՈՒԻԿ ԽՄԲԱՊԵՏՆԵՐՈՒ ՎԵՐԱՈՐԱԿԱՖՈՐՄԱՆ ՍԵՄԻՆԱՐ

Կասիա Կարապետեան ՅԱԼԷՊ

Բացայայտ իւրողութիւն է, որ Հ.Մ.Ը.Մ-էն ներս իր իւրայատուկ տեղը ունի ըսկառուութիւնը, որուն շարքերէն շրջանաւարտ եղող արիւններն ու արեւոյշները, երէցներն ու պարմանուհիները ապագայի ղեկավարներ կը դառնան ո՛չ միայն Հ.Մ.Ը.Մ-ի, այլ նաեւ՝ մշակութային, հայրենասիրական, բարեսիրական եւ այլ միութիւններու մէջ: Երբեմն ալ կը հանդիպինք ազգային գործիչներու, որոնք միութենական ծառայութեան իրենց առաջին քայլերը նետած են Հ.Մ.Ը.Մ-ի սկառուական շարքերէն ներս:

Սկառուութեան հիմը կը նկատուի ԶՅամեայ գայլիկութիւնը, որ առաջին հանգրուանն է անհատին մէջ սերմանելու Հ.Մ.Ը.Մ-ի գաղափարաբանութիւնը, ազգային ոգին, հաւաքական աշխատանքի գիտակցութիւնը, եւ ընկերային առողջ մթնոլորտը: Կ'ըսեն թէ՛ «Եթէ լաւ մանկապարտէզ ունիք, կը նշանակէ թէ՛ ապագային լաւ նախակրթարան եւ երկրորդական կ'ունենաք», եւ որովհետեւ գայլիկութիւնը Հ.Մ.Ը.Մ-ի մանկապարտէզը կը նկատուի, Սուրբոյ Շրջանային Սկառու. Խորհուրդը ազնիւ գաղափարը յղացաւ կազմակերպելու գայլիկ-արծուիկ աստիճանաւորներու վերաորակաւորման սեմինար մը Կիրակի, 28 Յունիս 2009ին, Հալէպի Հայ Աւետարանական Էմմանուէլ դպրոցին մէջ:

Առաւօտ կանուխ արդէն ժամանեցին Դամասկոսի, Լաթաքիոյ, Քեսապի, Գամիշլիի մասնաճիւղերու եւ Տէր Զօրի սկառուական կորիզի քոյրերն ու եղբայրները, որոնք միանալով Հալէպի մասնաճիւղի քոյրերուն եւ եղբայրներուն՝ ուղղուեցան աշխատանքի:

Գործունէութիւնը բացուեցաւ ժամը 9ին, «Յառաջ նահատակ» քայլերգով,



որմէ ետք բարի գալուստի խօսք արտասանեց Սուրբոյ Շրջանային Սկառու. Խորհուրդի ատենապետ եղբ. Մանուկ Քէօշկէրեան: Ան իր խօսքին մէջ ըսաւ. «Նման հաւաքները կը ծառայեն մեր միութեան նպատակը իրագործելու, փորձելով ստեղծել մրցակցութեան մթնոլորտ, իրերօգնութեան ոգի սերմանել եւ աւելին՝ մղել ձեզ ինքնագաղափարման եւ ինքնակերտումի»: Մասնակցողները բաժնուեցան չորս վեցեակի՝ կարմիր, կապոյտ, նարնջագոյն եւ կանաչ, որոնք իրարու միանալով կազմեցին վոհմակ մը: Սեմինարին ներկայացուեցան հետեւեալ նիւթերը.՝ Մեծ կանչ եւ երեք շրջանակները (քոյր Մարալ Գալստեան-Մէմէրեան), խմբապետին պարտականութիւնները եւ պարտաւորութիւնները (եղբ. Գէորգ Գարակաւորեան), գայլիկական կարգերը (եղբ. Եղիա Քիլէճեան), ո՞վ է Աքելյան, Պալուն, Պաղիրան (եղբ. Վիգէն Գալապեան), կրօնական դաստիարակութիւնը մանուկներու մօտ (քոյր Սիրուն Քէշիշեան), մանուկներու հոգեբանութիւն (օրդ. Անժելա Սանճեան), կենցաղավարական գիտելիքներու ուսուցումն ու կիրարկումը (տիկ. Այտա Մի-

նասեան), գայլիկական կարգերն ու աստիճանները փոխանցելու ձեւը (եղբ. Յովիկ Սիւլահեան), խոստում կատարելու ձեւը (Շրջ. Խմբապետուհի քոյր Կասիա Կարապետեան), փոխանցման արարողութիւն (Շրջ. Խմբապետ եղբ. Աւօ Տէրվիշեան): Ասոնց կողքին, իւրաքանչիւր վեցեակի տրամադրուեցաւ անկիւն մը եւ պարտականութիւն տրուեցաւ բնութենէն օգտուելով զարդարել զայն:

Կանչերը, խաղերը, ձեռնալին աշխատանքները իրենց մեծ ազդեցութիւնը ունեցան մթնոլորտը խանդավառելու եւ վեցեակներու միջեւ մրցակցութեան ոգի ստեղծելու իմաստով:

Աւարտին, մասնակցողներուն բաժնուեցան հաստատագիրներ, որոնցմէ ետք գործունէութիւնը փակուեցաւ ժամը 8ին, «Ով հայ արի» քայլերգով:

Մասնակցողները մեկնեցան իրենց քաղաքները՝ միանալու իրենց մասնաճիւղերուն եւ ստացուած գիտելիքները փոխանցելու անդամներուն: Այս մէկը արդէն կը նմանի դրօշաբարձի մը, որ պիտի անցնի սերունդէ սերունդ՝ ծառայելով Հ.Մ.Ը.Մ-ի «Բարձրացի՛ր-բարձրացու՛ր» նշանաբանին:

Հ.Մ.Ը.Մ.Ի ՍՈՒՐԻՈՅ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆԸ՝ ԵՐԵՔ ՀԱՄԱՆՔԱՊԵՏԵՐՈՒՆ

Սուրիոյ Շրջ. Վարչութիւն ՅԱԼԷՊ

Սուրիոյ հայ համայնքի հոգեւոր երեք պետերուն Հ.Մ.Ը.Մ.Ի յարգանքն ու երախտագիտութիւնը յայտնելու համար, Հ.Մ.Ը.Մ.Ի Սուրիոյ Շրջանային Վարչութեան անդամ եղբայրներ՝ ատենապետ եղբ. Բաֆֆի Տէր Աբրահամեան, Արմէն Քէօզկէրեան, Արտաշէս Փայասեան եւ Լեւոն Իսկէնտէրեան 10 Մայիս 2009ի առաւօտեան պաշտօնական այցելութիւն մը կատարեցին Հարլայի հայ կաթողիկէ համայնքի Առաջնորդ Արհիպատիւ Պետրոս Արք. Մրէսթեանին: Հակառակ անոր, որ Գերապայծառ Հօր մօտ կը գտնուէին աւելի քան 60 Փրանսացի զբօսաշրջիկներ, ան սիրայօժար ընդունեց պատուիրակութիւնը եւ անոնց ծանօթացուց Շրջանային Վարչութեան անդամները, ապա ամփոփ տեղեկութիւններ փոխանցեց Հ.Մ.Ը.Մ.Ի եւ անոր առաքելութեան մասին՝ ի սփիւռս աշխարհի: Հանդիպումին ընթացքին տեղի ունեցաւ զրոյց մը՝ Հ.Մ.Ը.Մ.Ի գործունէութեան մասին եւ Առաջնորդ Գերապայծառը բարձր գնահատեց 3 Մայիսին տեղի ունեցած Հ.Մ.Ը.Մ.Ի աւանդական տողանցքը:


Նոյն օրը, վարչական եղբայրները այցելեցին հայ աւետարանական համայնքի նախագահ Վերապատուելի Յարութիւն Սեփիմեանին, որուն հետ խօսուեցաւ հայ երիտասարդութիւնը հետաքրքրող հարցերու շուրջ: Վերապատուելին իր անվերապահ աջակցութիւնը յայտնեց Հ.Մ.Ը.Մ.Ի բոլոր աշխատանքներուն եւ իր պատրաստակամութիւնը փոխանցեց համայնքի բոլոր դպրոցները ի սպաս դնելու Հ.Մ.Ը.Մ.Ի ձեռնարկներուն եւ աշխատանքներուն համար:

Կիրակի, 17 Մայիս 2009ին, վարչական եղբայրները այցելեցին Բերիոյ Թեմի Հայոց Առաջնորդ Շահան Եպս. Սարգիսեանին: Հանդիպումին կեդրոնական նիւթ դարձան Հ.Մ.Ը.Մ.Ի գանազան աշխատանքները եւ անմիջական դերը՝ սերունդներու դաստիարակութեան մէջ: Սրբազան հայրը իր խօսքին մէջ յիշեց ու բարձր գնահատեց Հ.Մ.Ը.Մ.Ի սկսուածութեան եւ շեփորախումբին մասնակցութիւնը ազգային ու պետական ձեռնարկներուն: Այցելութիւններու աւարտին, Հ.Մ.Ը.Մ.Ի Սուրիոյ Շրջանային Վարչութեան անունով ատենապետ եղբ. Բաֆֆի Տէր Աբրահամեան միութեան վահանն ու շուշանածաղիկը խորհրդանշող յուշանուէրներ յանձնեց երեք համայնքապետերուն, առ ի երախտագիտութիւն անոնց ցուցաբերած նեցուկին եւ անվերապահ աջակցութեան:



ՃԱՆԶՆԱՆՔ ՄԵՐ ՄԱՐՄԻՆԸ

ՄԵՐ ԲԶԻԶՆԵՐԸ



**Քաղեց՝ Սալբի Լատոյեան
ՊԵՅՐՈՒԹ**

Մեր մարմինը կը բաղկանայ անհաշուելի մանր միաւորներէ, որոնք կը կոչուին բջիջ: Անոնք քանքան փոքր են, որ միայն մանրադիտակով կարելի է տեսնել զանոնք: Շնչող բոլոր էակները կ'ունենան բջիջներ: Մարդկային մարմինը բաղկացած է աւելի քան 100 միլիարդ բջիջներէ, որոնցմէ ամէնէն մեծերը ձուկներն են, իսկ ամէնէն փոքրերը՝ ուղեղի բջիջները:

Չափահասները նոյն չափի, սակայն աւելի մեծ թիւով բջիջներ ունին՝ քան երեխաները:

Բջիջները կրնան ապրիլ քանի մը ժամէն մինչեւ քանի մը ամիս: Միայն ջիղերու բջիջները կ'ապրին շատ երկար եւ բնաւ չեն փոխարինուիր:

Բջիջ մը երբ մեծնայ, կը բաժնուի, կազմելու համար երկու նոր բջիջներ: Նոր բջիջները, որոնք նման են նախկինին, կ'օգնեն որ մեր մարմինը մեծնայ եւ առողջանայ:

Կան հարիւրաւոր տեսակի բջիջներ: Նոյն տեսակի բջիջները կը միանան իրարու՝ կազմելու համար մկան, ոսկոր, արիւն եւ այլն:

Միլիոնաւոր բջիջներ կը մեռնին օրական: Անոնք կը փոխարինուին նոր բջիջներով: Երբ լոգնանք, մեր մորթին մեռած բջիջները կը թափենք: Այսպէս, մօտաւորապէս 20 կրամ մորթ կը կորսնցնենք ամէն ամիս:

Մեր մարմինը կը բաղկանայ տարբեր ձևի բազմաթիւ բջիջներէ: Երկար, ինչպէս՝ ջիղերու բջիջները, կլոր՝ իւղոտ բջիջները, տափակ՝ մորթի բջիջները եւ այլն:

Ընդհանրապէս բջիջները կը պարունակեն կորիզ մը, որ կը գտնուի իրենց կեղրոնը եւ կը բնորոշէ իրենց ձևը, մեծութիւնն ու պաշտօնը եւ կը տնօրինէ ամբողջ ու վերարտադրման ընթացքը:

Բջիջը կը պաշտպանուի նուրբ եւ բարակ մաշկով մը:

ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԷՆ

ՄԱՆՐԱԴԻՏԱԿԸ

Մանրադիտակը գործիք մըն է, որ կ'օգնէ տեսնելու շատ մանր առարկաները, որոնք սովորական աչքով չեն տեսնուիր:

Առաջին մանրադիտակը շինուած է 1595ին, Հոլանդիայի մէջ:

Կան երկու տեսակ մանրադիտակներ.-

- **Տեսողական մանրադիտակներ** (Optical microscopes), որոնք կը բաղկանան ոսպընեակներէ, դիտելու յատուկ ապակիէ, փոքր առարկան լուսաւորող լոյսի աղբիւրէ եւ հայելիէ:




Հայելին կ'օգնէ որ լոյսին ճառագայթները թա-

փանցեն երկու բարակ ապակիներու մէջ գտնուող առարկային կամ ուտելիքին եւ մենք դիտելու ապակիէն տեսնենք առարկային կամ ուտելիքին մանրամասնութիւնը: Տեսողական մանրադիտակը 1500-2000 անգամ կը մեծցնէ դիտուելիք առարկան:

- **Ելեկտրոնիկ մանրադիտակներ**, որոնք աւելի կը մեծցնեն՝ քան տեսողական մանրադիտակները, հետեւաբար առարկային աւելի մանրամասնութիւնները կը տեսնենք ելեկտրոնային ճառագայթներու միջոցով:

Այս երկու տեսակի մանրադիտակները կը գործածուին դիտելու եւ ուսումնասիրելու համար մանրէները, բջիջները, արիւնը, մաշկերը եւ այլն:

Իսկ երկինքը եւ աստղերը դիտելու համար կը գործածենք հեռադիտակը:





ՏԱՐՐԻՆԱԿ ԲԱՅՑ ԻՐԱԻ

ԱՇԽԱՐՀԻ ԱՄԷՆԷՆ ՏԱՐԻՔՈՏ ԵՒ ՀՄԿԱՅ ՇՈՒՆԵՐԸ



Աշխարհի ամենէն տարիքոտ շունը կը կոչուի Շանէլ. ան 21 տարեկան է, այսինքն՝ 147 տարեկան մարդու տարիքով: Ան լաւ եւ առողջ վիճակի մէջ է, կ'ապրի Միացեալ Նահանգներու մէջ եւ անոր տարեդարձին ներկայ կ'ըլլան հազարաւոր մարդիկ՝ տեսելու համար բախտաւոր այս շունը:

● Աշխարհի ամենէն հսկայ շունը կը կոչուի Կրիպլըն: Ան կ'ապրի Միացեալ Նահանգներու Գալիֆորնիա նահանգը: Անոր հասակը 107 սմ. է եւ 31 Օգոստոս 2004էն ի վեր կը պահէ հսկայ շան իր մրցանիշը:



ՀԱՆԵԼՈՒԿ



Կը քալէ առանց ոտքի, կը թռչի առանց թեւի, կու լայ առանց աչքի:

(Պատասխանը՝ յաջորդի: Նախորդ հանելուկին պատասխանն էր Ծիծեռնակ):

ԿԵՆԴԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԻ

ԱՅԾԵՐԸ



Այծերը ստնաւոր, ընտանի կենդանիներ են: Անոնք շատ կը նմանին ոչխարներու ընտանիքին:

Այծերը շատ լաւ կը ցատկեն եւ կ'ապրին անտառներու մէջ:

300 տարբեր տեսակի այծեր կարելի է գտնել աշխարհի վրայ:

Այծերը երկու կոտոջ կ'ունենան: Կոտոջները կը տարբերին՝ նայած անոնց պատկանած ընտանիքին:

Հետաքրքրական է նշել, որ էգ եւ արու այծերը մօրուք կ'ունենան, ինչպէս նաեւ՝ պզտիկ եւ վեր ցցուած պոչ մը:

Այծերը խոտ եւ կանաչեղէն կ'ուտեն: Անոնք նաեւ կը սիրեն ծառերու կոճղերը կրծել:

Այծերը շատ հետաքրքիր եւ խելացի կենդանիներ են: Անոնք իրենց հաւասարակշռութիւնը կրնան պահել նոյնիսկ ամենէն դժուար եւ նեղ տեղերէն քալելու ժամանակ:

Այծերը 15-18 տարի կ'ապրին: Անոնք երբ ձայն կը հանեն՝ կ'ըսենք կը մայեն:

Մարդիկ այծերը կ'օգտագործեն իրենց մազերուն (մուշտակին) եւ կաթին համար: Այծի կաթէն կը շինեն մածուն, պանիր եւ կարագ:

Այծին ձագը կը կոչուի ուլիկ:





Էլի Հուլիշեան

130 ՀԱՉԱՐ ՏՈՒԱՐԻ ՀԱՆԳԱՆԱԿՈՒԹԻՒՆ՝ Ի ՆՊԱՍՏ...

Շարունակուած՝ 28րդ էջէն

կող ուղղեց ներկաներուն, անդամներուն եւ համակիրներուն միասնաբար ու ձեռք-ձեռքի աշխատելու, որպէսզի օր առաջ մարզադաշտը պատրաստ ըլլայ մարզական աշխատանքները շարունակելու համար:

Ապա, ան մեծապէս գնահատեց օրուան կազմակերպիչ յանձնախումբի անդամներուն ճիգերը, որոնք ի գին ամէն գոհողութեան ձեռնարկը պսակեցին յաջողութեամբ: Բարի յիշեց նաեւ մարզադաշտի վերաշինութեան յանձնախումբի անդամներուն անունները: Ու վերջապէս, շեշտեց «Ազատամարտ»ին ամէն միջոցներով զօրավիգ կանգնելու կարեւորութիւնը, իբրեւ ապագայ մեր ղեկավարները կերտող մեծ ընտանիք:

Այնուհետեւ ցուցադրուեցաւ նոր

մարզադաշտի վերաշինութեան աշխատանքներուն տեսերիզը, որ մեծ խանդավառութիւն ստեղծեց սրահէն ներս: Ատենապետ եղբ. Կարապետեան յայտարարեց նաեւ, որ երկու տարի առաջ, մասնաճիւղին ՅՅամեակին, Սօսէ Խաչիկեան իր ամուսնոյն Նշան Խաչիկեանի յիշատակին նոյն նպատակին ի խնդիր խոստացած էր տրամադրել 100 հազար տոլար եւ թէ՛ այսօր այդ խոստումը արդէն իսկ յարգուած է:

Անկախ ասկէ, ներկաները ներշնչուած օրուան միջնորդութենէ՝ առատօրէն եւ անսակարկ նուիրաբերեցին, ու նոր հանգանակուած գումարը հասաւ 130 հազար տոլարի:

Յիշենք, որ երեկոն մինչեւ առաւօտեան կանուխ ժամեր իրերայաջորդ կերպով խանդավառեցին սիրուած երգիչ-

ներ, «Քնար» նուագախումբի ընկերակցութեամբ:

Անկասկած, որ սրբազան գործ մըն է նոր կալուածի մը տէրը դառնալը, որ կը նպատակադրէ բարենպաստ միջավայր մը ստեղծել Փասատինայէն ներս: Անոր համար մեր բոլորին հաւաքական զօրակցութիւնը անհրաժեշտ է:

Մէկ խօսքով ակումբ կամ մարզադաշտի վերաշինութիւն՝ շնորհակալ աշխատանք է, որ կը տարուի, որովհետեւ գաղութին համար նոր հեռանկարներ պիտի բանայ, որուն համար նուիրում եւ զոհաբերութիւն է պէտք:


Բոլորին վարձքը կատար եւ բարի վայելում:

ՀՈՐԻՉՈՆԱԿԱՆ

1. Հ.Մ.Ը.Մ-ի փինկ-փոնկի աստղերէն:
2. Պատշգամ - Մահիճի գլխակողմ:
3. Ամերիկեան համանուն գետ եւ ջրվէժ - Ռամ-կորէն՝ այո՛:
4. Այսինքն - Հոյլ - Անդարձագիր:
5. Համբերէ՛ - Չայրող (հակ.):
6. Արեւմտեան գինուորական ուխտ - Սուրիոյ քաղաքներէն:
7. Կտաւցու թելեր տուող բոյս - Չարայուշ:
8. Լծկան կենդանի - Փքին - Նուսաստ:
9. Էգ թռչուն - Թիւրակն:
10. Լար - Վայրի սարոր - Լեցուն:
11. Վրան երկաթ ծեծելու պողպատեայ կազմած - Քանկուրու - Նոյի որդիներէն:
12. Իգական անուն - Մարտունիի գիւղերէն:
13. Սեմական ժողովուրդ - Անէնթիւն:
14. Ֆրանսական քաղաք - Կրկնուած բաղաձայններ - Յուցական ածական - Դրկից տառեր:
15. Երիցուկ - Ողորկ քարի շերտ:
16. «Ֆորմիւլա 1»ի գերմանացի մրցավարորդ:
17. Հայկական ամիսներու ԺԷ. օրը - Թուղթի կըտոր - Շէն:
18. Ճամբայ - Սպասէ՛ - Տարի - Արական օտար անուն:
19. Ճոխ - Ազնուական ձիաւոր - Արաբական երկիր:
20. 1982ի լաւագոյն ֆիլմը - Հեռախօսի հնարիչը - Որիգ:

ՈՒՂՂԱՀԱՅԵԱՑ

1. Արհեստաւորի ունելեակ - Պտղատեսակ - Փարախ:
2. Տարածքի միաւոր - Միայնակեաց կրօնաւոր - Այբուբենէն - Իգական օտար անուն:
3. Աստուածային - Կրտուած ոչխար - Անուշաբոյր բոյս:
4. Պոչ - Յոյն դիցուհի - Վրդի զարդեղէն - Կրկնուած բաղաձայններ:
5. Լարաւոր նուագարան - Երաժշտախառն թատրոն - Սկառու:
6. Կարեւոր - Ռուս թենիսիւմըն:
7. Անբարեացակամ - Ճանկ - Իրերայաջորդ գիրեր - Երիվար:
8. Խորամանկութիւն - Կարեկից - Այբուբենէն:
9. Ամուսնացո՛ւր - Հարցական դերանուն - Խանդավառեր:
10. Անձնական դերանուն - Բոլորովին մերկ - Հրաւէր - Կրկնուած բաղաձայններ:
11. Արական անուն - Մանրագնին - Եպիսկոպոսական գաւազան:
12. Նշարակ - Հեռացիր - Տիւմ:
13. Կեռ - Սակաւ - Անգլիական տիտղոս - Արգելական:
14. Ասիական մայրաքաղաք - Եկեղեցական օրհներգութիւն:
15. Նաեւ - Կիպրական քաղաք - Խոռոչ:



ԹԻԲ 178 ԽԱՉԲԱՌԻՆ ԼՈՒԾՈՒՄԸ

1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15
1		Մ	Ա	Ր	Մ	Ն	Ա	Մ	Ա	Ր	Ձ	Ա		
2		Ո	Ր	Ո	Տ	Ա	Ն		Կ	Ր	Կ	Ի	Ն	
3		Մ	Ա	Տ	Ա	Կ					Ե	Ր	Դ	
4		Ա	Կ	Ն	Ի	Ն	Ա				Ռ	Ա		
5		Ա	Կ	Ն	Ի	Ն	Ա				Ր	Ց		
6	Ե	Ր	Կ	Ա	Ք		Ն	Օ	Ք		Լ	Ո	Կ	
7	Լ	Ս	Ե	Լ	Ի		Ի	Ր	Ի	Կ	Ո	Ի	Ն	
8	Ե	Ե	Ն		Ձ		Լ	Ե	Ձ	Ո	Ի	Ի		
9	Ն	Ն	Մ				Ն	Ա	Յ	Ի	Լ			
10	Ա	Լ	Ա	Ք			Դ				Պ	Ա	Ս	Ք
11	Ե	Ձ	Ա	Կ	Ի		Կ	Ռ	Ա	Հ	Է	Հ	Է	Ն
12	Ա	Ս	Ն	Ե	Ն	Ի	Շ	Ա	Լ	Ք	Է	Ա		
13	Ն	Ս	Տ	Ի	Ր		Ք	Ա	Տ	Ր		Օ	Մ	Ա
14	Ք	Ա	Շ	Ի	Ր	Ա	Կ	Ա	Ց	Ի	Ի	Ն	Ի	
15	Ո	Ր	Ս	Հ		Ռ	Ո	Ն		Ս	Ա	Լ	Ա	Ր
16	Վ	Ա	Ս	Տ	Ա	Կ		Ի		Մ	Ա	Յ	Ք	
17	Ի	Լ	Ի	Ն	Ի		Մ	Լ	Ե	Հ	Ը	Ս	Տ	
18	Ձ	Ա	Փ	Ա	Ր		Ր	Ե	Կ	Ա	Ն	Ե	Ր	
19	Ն	Ն	Ի	Ս	Տ		Տ	Ո	Կ	Ա	Ձ	Է		
20	Ն	Ձ	Ր	Ա		Վ	Ա	Հ	Ա	Ն		Տ	Ն	Ա

**ԼԻԲԱՆԱՆԻ Բ. ԴԱՍԱԿԱՐԳԻ ԱԽՈՅԵԱՆ՝
Տ.Մ.Ը.Մ.Ի ԴՈՒՐՃ ՏԱՄՈՒՏԻ
ՊԱՍՔԵԹ-ՊՈԼԻ ԱԳՋԿԱՆՑ ԽՈՒՄԲԸ**

